Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

203
Р-55

2314

Զ03
Մ-55
03 AUG 2009

# ԱՎԱՏՔԻ ՁԱՅՆ

## (ՀՈԳԵՎՈՐ ՅԵՐԳԵՐ)

Կ ա զ մ ե ց

Ա.-Մ. Գ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ

«Իրար սովորեցրեք յեվ խրատեցեք, սաղմոսներով յեվ օրհնություններով յեվ հոգեվոր յերգերով յեվ շնորհքով օրհներգեցեք Տիրոջը ձեր սրտերումը»:

ԿՈՂ. Գ. 16.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
... ՄԿՐՏՉԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՈՑ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ
1925 Թ.

26.06.2013

Главлит № 840· Тифлис. Тираж 200.

Թիֆլիս Ժ.Տ.Գ. Խ.Պոլիգրաֆ բաժնի 4-րդ տպ. Պուշկ. փ.3.

# ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐ

## ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1.

1. *Փառաբանություն առ յերրորդություն*
*Փառք և պատիվ ու զորություն*
*Հորն ու վորդուն և Սուրբ հոգույն.*
*Միանական յերրորդության*
*Փառք ի բարձունս հավիտյան*

### 2.

*Փառք և պատիվ ու զորություն,*
*Հորն ու վորդոյն և Սուրբ հոգույն.*
*Միանական յերրորդության,*
*Փառք ի բարձունս, փառք ի բարձունս։*
*Փառք ի բարձունս հավիտյան,*
*Փառք ի բարձունս, փառք ի բարձունս*
*Միանական յերրորդության,*
*Հորն ու վորդույն և Սուրբ հոգույն,*
*Հորն ու վորդույն և Սուրբ հոգույն,*
*Հորն ու վորդույն և Սուրբ հոգույն։*

Ալելուիա, ալելուիա, ալելուիա, ամեն, ամեն,
ալելուիա, ալելուիա, ալելուիա, ալելուիա։
Ալելուիա, ալելուիա, ալելուիա, ալելուիա ամեն,
ամեն։ Ալելուիա ամեն, ալելուիա, ամեն։

## 3.

1. Սուրբ ես, սուրբ ես սուրբ ես, Տեր
Յեհովայ, զորաց Աստուած.
Տիեզերք, ամեն բաներ,
Քո զորեղ խոսքովդ ծընած,
Յերբ բեվերներն ստեղծվեցան
Աչքըդ խիստ ուրախացավ.
Այն ժամ լսվեցան (ձայներ) յերգեր,
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տեր։
2. Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տեր,
Մեծ Յեհովայ, այժմ և միշտ.
Թեպետ հող, մոխիր յենք, Տեր,
Կը սիրենք պաշտել քեզ միշտ։
Աշխարհից անարգված,
Բայց նրանից մեզ յես փըրկած.
Միաբան կը յերգենք քեզ Տեր
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տեր։
3. Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տեր,
Հաղթական զորքերն կը յերգեն.
Յեվ փըրկված անթիվ ազգեր
Քեզ պիտի յերկրպագեն,
Յեվ հրեշտակք, սուրբերն ամեն
Ցնծության ձայն վերցընեն.
Միաբան ասուին յերգեր,
Սուրբ է, սուրբ է, սուրբ է Տեր։



## 4.

1. Բոլոր յերկրներ, տիրոջով ցնծացեք
Դողով և ուրախությունով,
Տեր յեհովային ընծաներ մատուցեք
հոգով և ճշմարտությունով։
2. Վորովհետև շատ բարերար է մեր Տերն
Վոր մեզ ստեղծել է, և մենք՝
Նորա խոստավետ արոտի վոչխարներն,
Պիտի Նորա ձայնը լսենք։
3. Նորա սուրբ դռներն յեկեք գոհությամբ,
Նորա սրահները մըտեք.
Նորան յերկրպագեք և որհներգությամբ,
Նորա անունից գոհացեք։
4. Նա է մեր Աստվածը. ի հավիտենից
Մնում յեն ու պիտի միան
Նորա խորհուրդներն ու գործերն գըթալից
Ազգից մինչև ազգ հավիտյան։

## 5.

1. Կօրհնենք քեզ, Աստուած, վի փրկիչը յեկավ
Խաչի վրա մեռավ և վերն փառքով համբարձավ։
Ալելուիա, մեր փրկիչը, Ալելուիա ամեն,
Ալելուիա, քոնն է փառքը,
Սըրբե մեզ նորեն։
2. Կը որհնենք քեզ, Աստուած, վոր հոգիդ ել իջավ,
Մեզ փրկիչը հայտնեց և խավարը անցավ։
Ալելուիա և այլն։
3. Միշտ փառք և գովեստ տանք զոհված գառնուկին
Վոր մեր մեղքը ջնջեց ու ներեց դարձողին։
Ալելուիա և այլն։

4. Միշտ փառք և գովեստ շնորհաց Աստուծոյն,
Որ սիրեց մեզ փնտրեց և տըվավ յուր վորդոյն:
Ալելուիա և այլն:
5. մեզ արթնացուր և հոգովդ նորոգե,
Ամեն սիրտ յերկնավոր յեռանդովըդ վառ և:
Ալելուի և այլն.
6. Վոհ, մեզ արթընցուր, մեռեալներս ողջնցուր,
Հիսուսի ձայնն լսենք, որ կասե «ինձ յեկուր»:
Ալելուիա, և այլն:

## 89. 6.

1. Յերկըրպագեմ սիրոյ զորության,
Որ Հիսուսով մեզ հայտնվեցավ.
Խոնարհվեմ սիրույդ ազնեցության,
Որով չընչին վորդս սիրվեցավ.
Փոխանակ իմ վրա մտածելու
Կընկըղմեմ յես անհուն ծովն սիրոյ:
2. Ինչպես քաղցր յեմ յես քեզ համար,
Ինչպես սիրտդ ինձ փափագում է.
Նույնպես իմ սիրտս միշտ քեզ համար
Բաբախում ու կարոտում է:
Ով դու մըտերիմ սեր, բարի եակ,
Դու ընտրեցիր ինձ, յես քեզ միակ:
3. Ես զգում յեմ պետք է քեզ ունենամ,
Քեզ համար միայն պետք է ապրեմ,
Հանգստության այլ տեղ պիտ չունենամ
Բայց միայն քեզնում այդ վորոնեմ:
Քեզ մոտ հանգիստ է յերջանկություն,
Ընդունեցի այդ յերանություն:



4. Ախ, Յիսուս, քո սուրբ անուն լիներ
Սըրտիս խորքում փորագրված.
Յերանի թե քո փրկչական սեր
Իմ միտք, սիրտ, հոգիս թափանցեր:
Գործում, խոսկում, ամենայն բանում
Միայն Յիսուս այլ բան չեմ ցանկանում:
5. Փառք քեզ Յիսուս և քո բարձր անվան,
Վորից ակն սիրո բըխում է,
Վորից ամեն տոներ կը գան,
Վորից սուրբ խումբը խըմում է.
Ի՜նչպես խոնարհվում յենք անվախճան,
Յերկրպագում նորան հավիտյան:

---

## II ՀՐԱՎԵՐ ԴԵՊԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ.

### 7 ГУс. 65.

1. Յեկ փըրկչի մոտ դու, յեկ, հենց հիմա,
Լսիր նրա խոսկը դեռ ժամանակ կայ.
Նա մեզ մոտ է, օրհնելու պատրաստ,
Կանչում է սիրով յեկ:
Քաղցըր, քաղցըր կլինի մի անգամ,
Յերբ մենք մեղքից ազատված կը գնանք
Մեզ խոստացված քանանու յերկիր.
Տեր Հիսուս գալիս եմ:
2. Յեկ դու իմ վորդիս, լսիր նրա խոսկը,
Նրան հետևիր, տուր նրան քո սիրտը.
Նա է ապահով միակ պաշտպանը
Ուրեմն վեր կաց և յեկ:
3. Վըստահ յեղիր Տերը կը ընդունի.
Զե՞ս զգում, վոր նա քեզ մոտենում է,

Սիրով լիքը Նա քեզ գրկում է.
Յեկ, ով մեղավոր, յեկ։

## 8 Гус. 38.

1. Մի դուռ գիտեմ շատ լայն բացված,
Պայծառ լույս անդ ծագում է,
Տիրոջ խաչից լուսավորված,
Նորա սիրուց խոսում է։
Ինչ մեծ շնորհք, ով իմ Աստուած,
Վոր ինձ համար էլ է բացված,
Յեվ ինձ համար, յեվ ինձ համար բացված։
2. Ամեն մարդու համար բացված,
Հարուստ լինի թե աղքատ,
Արքա լինի թե խաշնարած
Մտնել կարող է ազատ։
3. Դեհ, շուտ արա յեվ ներս մտիր
Մինչև դուռը փակվելը,
Խաչ ու պսակ դու ընդունիր,
Վոր տալիս է քեզ տերը։
4. Հորդանանից յերբ մենք կանցնենք,
Կը թողնենք ծանր խաչը
Կենաց պսակով կը պսակվենք
Յեվ կը յերգենք Տիրոջ սերը։

## 9. Ким. 22.

1. Վերկաց ով քնած, և հրավերն ընդունիր
Հանձնվիր հիսուսին և յեղիր բաղտավոր.
Դու զուր յես հեռանում Աստուծո գործից
Լսիր կանչում է Տերը քեզ այգիից։



Մեր Տերը շատ համբերող է
Իսկ մեղավորն հակառակ է։
Իր սիրտը Տերից ծածկում է
Աշխարհի համար բացում է,
Ասելով հետո կը գամ.
Յերբ ժամանակ ունենամ։
2. Տատանվող շտապիր, փրկչի արյուն ընդունել
Վոր նա աշխարհք գալով քեզ համար թափեց
Կանչում է շնորհք դու նորան մի մերժիր
Վեր կաց նոր կյանքի, մեղքի գերեզմանից։
Մեղավորին Տերն կանչում է
Իսկ նա Տիրոջից փախչում է
Նա պատասխանել չէ ուզում
Արդարներից է հեռանում
Իր պատվին ապավինում
Փողի սերն է նրան գերում։
3. Ահա որն անցնում է, գիշերն շուտ կը գա
Ով գիտե փրկչի գալու ժամանակը.
Ո՛հ մեղավոր շտապիր արի դու հիմա,
Թե չէ կուշանաս կը փակվեն դռները։
Հիսուս քեզ հիմա կանչեց
Յերորդ անգամ դուռդ ծեծեց
Յեթե դու հիմա չը դարձնես
Յեվ Տիրոջից ներում խնդրես
Նա շուտով քեզ կը դատի
Յեվ քո մեղքերն չի ներվի։
Ահա մեռած ընկերոջ տխուր խըմբով
Թաղում յեն այսոր սառը գերեզմանում
Նա մեռաւ անդարձ կապված իր մեղքերով
Յեվ գնաց նա տանջվելու անվերջ դժոխքում։

## 10.

1. Ասա Տերն յուր արյուն հեղեց
Եվ ինձ համար մեռավ,
Նա իր սուրբ գլուխ խոնարհեցրեց
Վորդնիս համար մեռավ,
Քեզ համար մեռավ,
Ինձ համար մեռավ,
Մեռավ Տերն ամենիս համար,
Եվ ինձ համար մեռավ:
2. Մեղքս ել ուսին վրա առնելով
Խաչին անեծք կրում ե·
Վոհ, այն զարմանալի սիրով
Ինձ ել նա սիրում ե:
3. Արեգակն իր յերես ծածկեց
Եվ հաղթվեց խավարով,
Երբ Տեր հիսուս աղաղակեց
Ցավով լիքը ձայնով:
4. Մեծ ամոթով իմ յերեսը
Ես միշտ ծածկեմ պիտի,
Լացեմ մինչև իմ բերանը
Գոհությունով լցվի:
5. Բայց սա ցավից ինձ չազատել·
Ինչքան ել լաց լինեմ.
Դու միայն սիրտս կարես բժշկել
Ես ել քեզ մոտ կ'բերեմ:

## 11 Гус· 180.

1. Ով յեղբայր, դու ինձ միշտ պատմիր
Հրաշալի խոսք կենաց.



Ականջիս անդադար երգիր
Հրաշալի խոսք կենաց:
Փրկարար խոսք կենաց
Զուր չինի քարոզված
Խոսք գեղեցիկ, խոսք հրաշալի
Հրաշալի խոսք կենաց:
2. Տերն ամենի համար ունի
Հրաշալի խոսք կենաց:
Ով ականջ ունի թող լսի
Հրաշալի խոսք կենաց:
Ամենը պարզ ե,
Տերը ձրի տալիս ե:
3. Քաղցր ձայնով միշտ դու հնչիր
Հրաշալի խոսք կենաց
Եվ մեղավորներին քաշիր
Հրաշալի խոսք կենաց
Աշխարհքն անցնում ե
Այդ խոսքն մընում ե:

## 12 Гус· 78

1. Ասա, եղբայր, դու վո՞րդեղ ես գնում.
Ճանապարհը մութ դժվար ե.
Եվ դու քույր, յես սա չեմ հասկանում,
Թե ինչն ե, վոր քեզ քաշում ե:
Քանանու յերկիր մենք գնում ենք
Պիտի լինենք շուտով այնտեղ.
Փրկչին հավիտյան մենք կը գովենք
Հրեշտակների հետ միատեղ:
Մենք շուտով Սիոնում կ'իջնենք,
Եվ այնտեղ ուրախ մենք կլինենք,

Մեր Փկչին հավիտյան կը գովենք
Հրեշտակների հետ միատեղ։

2. Բայց եղբայր. սա ինչպես է լինում,
Ասա, ես ինչ պիտի անեմ.
Վոհ քուրս, յես շատ եմ ցանկանում
Ձեզ հետ այնտեղ հանգիստ առնեմ։
Մենք գնում յենք դեպի յերջանկություն
Սա սուրբ հոգու միայն գործն է,
Մեզ տալիս է սեր, համբերություն
Յեվ զորություն վորքան պետք է։

3. Քույր, յեղբայր, ես էլ այնտեղ կլինեմ,
Աստուած ինձ էլ շնորհք տալիս է.
Նորանում յես էլ պիտի հաղթեմ.
Հետո պսակ ինձ էլ սպասում է։
Վոհ սրտանց մենք ուրախանում ենք,
Միացած մենք այնտեղ ենք գնում.
Ոգնիր, Հիսուս, մեզ վոր հաջողենք
Մեր նոր սկսած ճանապարհում։

## 13 Гус. 39.

1. Յելնենք գողգոթա, իմ յեղբայր,
Ուր Մեսիան խաչված է, վոր ղրկեց մեր Հայր,
Նա պատմեց մեզ համար թե սեր է Աստուած,
Բժշկեց մեր վերքեր, բայց այժմ նա խաչված.
Փառք տանք մենք նորան։

2. Յելնենք գողգոթա իմ եղբայր.
Մեր մեղաց համար տանջվում է վշտաց Այր,
Նա ծարավեց, նորան քացախ մեկնեցին,
Վորի կենաց ջրերըն աշխարհ լիացրին.
Գովենք մենք նորան։



3. Յելնենք գողգոթա, իմ եղբայր,
Յեկ յեղբայր, բարձրանանք սրբազան այդ վայր,
Ուր Հիսուս աղոթեց. «Հայր ներիր դորանց».
Յեկ, վոր այդ աղոթքով ապրի և մեր անձ.
Որհնենք մենք նորան։

4. Յելնենք գողգոթա, իմ յեղբայր,
Ուր գոչեց Փրկիչը. լըւած վերջին ծայր,
«Վոհ Աստուած իմ, Աստուած, ինչու թողիր ինձ,»
Իմ յեղբայր, վոր փրկե հոգիդ և հոգիս։
Դիմենք մենք նորան։

5. Յելնենք գողգոթա, իմ եղբայր,
Փրկչին խոսքը հնչում է ծայր ե ի ծայր.
«Կատարված է, հոգիս ավանդում եմ քեզ։»
Այսպես զոհվեց մեզ համար գառնուկը հեզ,
Յիշենք մենք նորան։

6. Յելնենք գողգոթա իմ եղբայր,
Բարձրանանք դեպի այս անհեզ մրցավայր.
Մեր մեղքը նա կրեց և տանջվեց անհուն,
Վոհ ինչ թանգ գընով նա գնեց փրկություն.
Պաշտենք մենք նորան։

## 14. Гус. 61.

1. Ահավորը վերջանում է
Խավար կպատե յերկիրը.
Ու այս գիշեր ընդ միշտ գուցե
Հոգիդ կանչում է Տերը։

2. Այն ժամ ճշմարտություն կհիշես
Վոր սուրբ գրքից ես լըսել
Այն ժամ դու դառն վողբալու յես
Վոր Փրկչին չես ընդունել։

3. Բայց ավաղ արդեն ուշ կլինի
Այնդեղ դրություն չի փոխվիլ.
Ինչ որ այստեղ չընդունեցիր
Նա այնտեղ քեզ չի տրվիլ։
4. Այնտեղ կենաց գիրքն բացված է
Հրավերի ձայն է հնչում.
Ով որ այն գրքում գրված չէ
Դրսի խավարումն է մնում։
5. Վոհ իմ երկմտող բարեկամ
Իզուր որերդ մի վատնիր
Ընդունելով յերկնայի ձայն
Շուտ յեկ հիսուսին դիմիր։

## 15. ГУс. 37.

1. Գիտե՞ս աղբյուրն վոր բղխում է
Խաչից վորդեղ մեռավ Քրիստոս.
Գիտե՞ս նրան վոր բժշկում է
Ցավ ու վերքեր արյունահոս։
Թե է կարմիր իմ շատ մեղքեր,
Յեվ լեռներից շատ հանցանքներ.
Քրիստոսի արյունը հեղվեց,
Ձյունից ել ինձ սպիտակ արեց։
2. Հայրը ծածկեց իր յերեսը,
Յերբ խաչի վրա Նա կախված եր,
Սուրբ գլխի վրա փշյա պսակը
Յեվ չարչարանք անողուտ չեր։
3. Յես լսեցի Քրիստոսի ձայն
Յեվ իմ կյանքը սրանով ալրեց.
Հեղված արյուն չեղավ ունայն.
Ձյունից ել ինձ սպիտակ արեց։



4. Հոգնած և վաստակած հոգիս
Հանգստություն յերկար փընտրեց,
Յեվ ինձ մոլորված վոչխարիս
Խաղաղություն Նա պարգևեց։
5. Սիրում յեմ այս լուր միշտ պատմել
Թե Փրկիչըս արյուն թափեց,
Յեվ ամեն մարդկանց պարզ ասել.
Ձյունից ել ինձ սպիտակ արեց։

## 16. Гус. 40.

1. Մի նայվածք խաչյալին բավ է կյանք տալու,
Կյանք տալու մեջ նույն վայրկենին։
Արդ նայիր, մեղավոր, նայիր փրկելու
Նորան, որ զոհված է մահին։
Տես, տես և ապրիր,
Մի նայվածք խաչյալին բավ մեզ կյանք տալու,
Կյանք տալու մեզ նույն վայրկենին։
2. Վո՞հ, ինչու Նա տարավ այսչափ մեծ տանջանք
Չե՞ որ պատժվեց վասն մեր մեղաց.
Վո՞հ, տես նորա կողից արյան այն հոսանք,
Վոր քավիչ է մեր հանցանաց։
3. Վոչ քո արտասուք և վոչ քո աղոթքներ,
Այլ միմիայն արյունն է քավում.
Ուստի տար նորան քո ամենայն մեղքեր,
Քեզ թողություն է պարգևում։
4. Վո՞հ, մի յերկմտիր, մոտեցի դու վստահ.
Չը մնաց վոչ մի բան անկատար.
Նա հավատարիմ եր յուր հորն մինչև մահ.
Յեվ զոհվեցավ Նա մեզ համար։

5. Ուստի ընդունիր հիսուսից անհապաղ
Ձրիապես կենաց լույսը.
Հաստատ հավատա մի լինիր անխաղաղ.
Կապրես մի կորցնիր քո հույսը։

## 17. Гус. 191.

1. Կա մի աղբյուր, վորից արյուն
Ինձ համար բղխում է,
Այս հրաշալի առատ աղբյուրն
Վերքերս սրբում է։
Միշտ բղխում է այս թանգակին
Արյունն և ինձ համար.
Բևեռում է տիրոջ խաչին
Ցավերս անհամար։
2. Ավազակն գտավ աղբյուր
Հիսուսի շնորհաց մեջ,
Յեվ լուացված սուրբ և մաքուր
Ահա նա դրախտի մեջ։
3. Ով գառն Աստծո, քո թանգ արյունն
Ունի նույն զորություն,
Վառիր հոգույդ զորավոր հուրն
Վոր սրբում է մարդուն։
4. Ինձ ոգնել՝ է այս սուրբ արյունն
Յեվ մեղքից ազատել.
Սա կարող է և ամենուն
Նույն ոգնություն անել։
5. Այս արյունն է բոլոր կենացս
Ուրախության աղբյուր,
Նույնպես և իմ որհնության յերգս
Յեվ իմ Փրկչիս գովում։



## 18. Гус. 73

1. Հնչիր զանգակ յերկնից, հրեշտակք հրճվեցեք,
Մի սիրտ մոլորված դարձել է տուն,
Հայրն ուրախացավ վորդու համար տեսեք,
Գրկում է նորան և համբուրում։
Ալելույա, հրեշտակք ցնծացեք,
Ալելույա, եղբայրք հրճվեցեք,
Յերջանիկ հոգիների անթիվ խումբեր,
Բերեք Աստծոն այս որ բերկրանքներ։

### ԻՆՉ ՅԵՐՋԱՆԻԿ ՈՐ

2. Հնչիր զանգակ յերկնից, ինչ յերջանիկ որ,
Ազատ է մի անձ արժան մահու.
Կորած և թշվառ մոլորված մեղավոր
Փրկված է այժմ զավակ Աստծու։
3. Հնչիր զանգակ յերկնից, քույրեր ցնծացեք
Յեղբայք ձեր յերգ ամուր երգեցեք.
Բարի լուր մինչև յերկինք տարածեցեք,
«Կորած վորդին տուն է» ասացեք։

## 19. Пс. Хр. 81.

1. Մի մերժիր դու քեզնից հոգին.
Մի ուշացնիր և վոչ մի որ.
Գիտես, պետք է դառնալ փրկչին,
Դարձիր նորան դու հենց այս որ։
Լավ է այս որ, լավ է այս որ,
Դարձիր նորան դու հենց այսոր.
Լավ է այս որ, լավ է այս որ,
Դարձիր նորան դու հենց այս որ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/1 1922

2. Ի՞նչ գիտես յերբ է կյանքիդ վերջն,
Վո՜հ հիսուսին դիմիր այս օր.
Նա է քո կյանքի միակ աղբյուրն,
Դարձիր նորան դու հենց այսօր։
3. Ի՞նչ է տալիս աշխարհքը քեզ—
Ունայնություն ամենայն օր.
Թե վոր հաստատ փրկվել կուզես,
Դարձիր նորան դու հենց այսօր։
4. Մեղավորին ընդունում է
Յեվ անում է նա փառավոր,
Տես վորքան շատ քեզ սիրում է —
Դարձիր նորան դու հենց այսօր։

### 20. П. Х. 13.

1. Տես տանջվող սիրտ, քրիստոսին.
Տես ապրիր, տես ապրիր.
Ով փրկում է մեզ, խաչից,
Տես ապրիր։
Նրան փայտի վրա բեվեռած,—
Տես ապրիր, տես ապրիր։
«Ինձ տես» կանչում է խաչից,
Տես ապրիր։
Տես քո տիրոջն բևեռված,
Տես քո մոտ է, նա կանգնած.
Տես ապրիր մի մեռնիր դուր
Տես ապրիր։
2. Թե աղքատ ես մեղավոր
Կեղծ ամոթից փախչելով,
Ով վոր թշնամուց եր գերված
«Ինձ տես և յեղիր փրկված»։



3. Թե թափառել յես շատ տեղ,
Մի մեռցնիր խիղճդ անմեղ,
Ամենքին հայրն կանչում է,
Ով էլ լինես ընդունում է։

### 20. Гус. 85.

1. Թող առնե ով կուզե և առանց փողի
Փրկության պարգևը տրվում է ձրի.
Լըսեցեք և յեկեք, Տերը կանչում է.
Ով կուզե այս որ առնե։
Թող ծարավն առնե, թող գա և խըմե,
Մեր Տերը սիրով ամենին կանչում է.
Ամեն բան պատրաստ է դուռը բաց է,
Ով կուզ է այս որ առնե։
2. Թող առնե ով կուզ է, առնե, ու խմե
Յեվ հետո ամենին թող նա հաղորդե,
Ինչ որ խոստացել է Տերը տալիս է,
Ով կուզե այս որ առնե։
3. Թող առնե ով կուզե և չուշացնե,
Սիրտը անհանգիստ և հոգին ծարավ է.
Մեր Ջուրի աղբյուրը Հիսուսն ինքն է,
Ով կուզե այս որ առնե։

### 21. Гус. 88.

1. Յեղբայր լըսիր դու բարի լուր, քրիստոս քեզ համար մեռավ,
Բոլոր մեղքերիդ պատիժը, ինքն իրան վերա առավ։
մեր մեղանչանքների համար, Աստուած նրան մահի մատնեց,

Յեվ մեզ մեղքով մեռածներիս, որդիներ նա անվանեց։

Նա յեկավ վոր մեզի փրկե,
Տիրող ունայնությունից,
Նա յեկավ վոր մեզ ազատե
Վո՜հ, յեկ շուտ Նրա մոտ և դու,
Վո՜հ, յեկ դու, վո՜հ յեկ դու,
Վազիր Նրա մոտ դու հիմա։
Վո՜հ յեկ դու, վո՜հ յեկ դու,
Վո՜հ յեկ դու Նրա մոտ հիմա։

2. Աստուծուն վաղուց յես թողել, գնալով քո ճանապահով
Դու անվերջ կյանքից չես մոտծել, վառվել ես քո կիրքերով.
Զարթիր դու քո մահվան քնից, և շուտ կանչիր Քրիստոսին
Քեզ կըհաշտեցնե Աստծո հետ, հեղված խաչից արյունով։

3. Նա կամենում է քեզ փրկել. ունայնության գերությունից։
Միայն ինչպես զինվոր Քրիստոսի, կըփրկվես հավիտենից։
Դու տուր, Նորա ցանգացածը, քո սիրտն, հոգին, և քո սերն,
Յեվ զորությամբ Նորա արյան, կաղատուես հիմա մահից։

## 22. Ким. 11.

1 Քրիստոսի մոտ յեկեք շուտով,
Փրկությունը պատրաստ է.



Ձեզ կանչում է իր մեծ սիրով,
Յեվ փրկել կամենում է։
Նա կարող է և (անգամ 3)
Ձեզ կանչում եշուտ յեկեք (2 անգամ)

2. Թե նեղված յեք դուք շուտ յեկեք,
Ձեզ համար կա լիություն.
Ինչ վոր պետք է, ընդունեցեք,
Թողություն և փրկություն։
Գընեցեք դուք (3)
Առանց փողի գնեցեք։ (2)։

3. Ձեր ջանքերով այս աշխարհքում
Ձեք կարող բարի դառնալ.
Վո՜հ ինչու դուք չեք ցանկանում
Հիսուսին մոտ շուտով գալ։
Նա կտա ձեզ (3)։
Իր Սուրբ հոգին Առաջնորդ (2)։

4. Բեռնավորներ, յեկեք շուտով,
Փրկիչը ձեզ է կանչում.
Իմացեք վոր ուշանալով
Դեպի կորուստնեք գընում։
Մեղավորներ (3).
Արդարներ չե նա կանչում (2)։

5. Վաստակածներ դուք շուտ յեկեք,
Հիսուսումն է փրկություն,
Յեվ Նորան ապավինեցեք,
Ձըկա ուրիշ մեկ անուն։
Ոչ մեկ անուն (3)
Վոր կարենա մեզ փրկել (2)։

6. Գեթսեմանում աղոթում է
Մինչև գետին խոնարհված.

Խաչի վրա նա մեռնում է
Իր ձեռքերը տարածած։
Խե՜ղճ մեղավոր (3)։
Տակավին չե՞ս համոզվում։
7. Հրեշտակները երկնքում
Տիրոջն յեն փառավորում,
Ամեն սրբոց բազմությունը
Հիսուսին է միշտ գովում։
Ալելույա՜ (3)։
Թող հնչե և մեր միջում (2)։

## 24.

1. Այգիին Տեր այցելու լեր,
Քու անձրևդ միշտ ղրկե մեզ.
Շուտ կնըվաղին սրտեր մեր,
Թե լույսդ մեր վրա չը ծագես։
Զորացուր մեզ, զորացուր մեզ,
Ոգնությունն է լոկ քեզ մե։
2. Մի կենար մեզնից հեռու, Տեր,
Այլ շնորքդ վերից մեզ ղրկե,
Հաղթում յեն մեզ փորձությունններ
Թե վողորմությունդ չոգնե
Զորացուր մեզ (2)։
Ոգնություն է լոկ քեզ մե։
3. Թող սաստիկ սեր լեցընե մեզ,
Աղոթքի մեջ զորանանք.
Թող նա որ կը զավանի քեզ
Միշտ ըաղթ է չարին փորձանք։
Զորացուր մեզ (2)
Ոգնություն է լոկ քեզ մե։



4. Տեր, հալծե ուժով փորձողը.
Քարեղեն սիրտն կակղացուր.
Ըսկսե հիմա մեծ գործը,
Մեղավորն քեզի դարձուր։
Զորացուր մեզ (2)
Ոգնություն է լոկ Քեզ մե։

## 25.

1. Յեկեք մեղավորներ յեկեք,
Խեղճ, հիվանդ ու վիրավոր,
Հիսուս Փրկելու պատրաստ է,
Լի գութով և զորավոր.
Նա կարող է, նա հոժար է,
Մի լինենք կասկածավոր։
2. Յեկեք շուտով, դուք կարող եք.
Սա ձեր Աստծու պարգևն է.
Ապաշխարեք, հավատացեք,
Փրկությունը շատ մոտ է.
Առանց փողի, առանց փողի
Հիսուսը ձրի տալիս է։
3. Մի ուշանաք, շուտով յեկեք,
Մի աշխատեք ձեզ շիտկել.
Չի պահանջվում ձեզնից մի բան
Միայն կարող գալ և առնել.
Նա տալիս է, նա տալիս է
Իր աղբյուրից ձրի խմել։
4. Ով բեռնավորվածներ յեկեք,
Փրկիչը ձեզ է կանչում.
Թե վոր սպասեք լավանալու,
Զուր տեղն եք դուք ջանք անում.

Վոչ արդարներ վոչ արդարներ,
Մեղավորներ է կանչում։

5. Տես Ստեղծողիդ գեթսեմանում,
Պարտեզի մեջ տարածված,
Տես Նորան և գողգոթայում
Փուշի պսակով պըսակված
Կատարված է, կատարված է
Մեղավոր չես համոզված։

## 26. П. Х. 5.

1. Ո՞ւր պիտի ապրես հավիտյան,
Առ ինձ ու քեզ հնչում է ձայն.
Ի՞նչ է կը տաս արդյոք պատասխան
Ո՞ւր պիտի ապրես հավիտյան։
Անվախճան կյեանք (2 անգամ)
Ո՞ւր պիտի ապրես հավիտյան։

2. Արդեն շատերն Տիրոջ մոտ յեկան
Յեվ թողին մեղքին ծառայելը.
Յեվ դրախտի մեջ բաժին գըտան
Ո՞ւր պիտի ապրես հավիտյան։

3. Թողնելով նեղության ճամփան,
Գընում ես լայնով աշխարհի նման.
Ա՞րդ քեզ սպասում է ինչ վախճան,
Ո՞ւր պիտի ապրես հավիտյան։

4. Ո վճռիր դու հենց այս ժամին,
Հանձնիր քո կյանք և սիրտն փրկչին.
Յեվ շտապիր հասնել ամենքին,
Նրա մոտ պիտ ապրեմ հավիտյան։



## 27.

Սաստիկ խփում է փոթորիկը
Փոքրիկ նավակին,
Տատանվելով այս այն կողմը
Մոտ է նա ժայռին։

Սիրտ առ, Փրկչին նայիր,
Տես, ինչ է ասում.
Յես ձեզ, հետ եմ ամենայն որ,
Ոգնում, յեմ ձեզ, մի վախենաք.
Այո, ձեզ հետ յեմ ամենայն որ
Ոգնում յեմ ձեզ, մի վախենաք։

Տես նավի մեջ գտնվող մարդիկ՝
Անկարող անձինք,
Նրանք դիմեցին վարդապետին,
Տերն ոգնեց վերեն։

Կյանքի ովկյանոսի մեջ էլ
Փչում է փոթորիկ,
Այդ բարի լուր ունենք մենք էլ
Կա մեզ մի փրկիչ։

Հիսուս յեկավ վոր մեզ փրկե
Նեղության ձորից.
Թող Նա քեզ էլ առաջնորդե
Յերկինք այս յերկրից։

## III. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

### 28. П. Х. 3.

1. Ներիր իմ մեղքերս աններելի
Թեև մահվան յեմ արժանի
Ներիր, թեև թույլ է աղոթքս
Թեև տկար աղաչանքս։
2. Ներիր թեև որերս անցած են
Հետ չեն բերվի, իմ քայլերըս
Ներիր որ տկար է հավատքըս
Ներիր տըկարութեանս ոգնիր։
3. Ներիր, և քո հավատքի լույսով
Իմ սրտի ներսն լուսավորիր,
Ինչպես խոստացել ես Նոր ուխտով
Ի սեր Քո խոսքերին ներիր։
4. Ներիր ի սեր Քո մեծ տանջանքի
Ի սեր Քո հեղված սուրբ արյան
Ի սեր հայրական վողորմության
Ներիր և Քո սիրով ծածկիր։
5. Քեզ հետ մատընչող կակոբի նման
Զեմ հեռանալ յես Քեզանից,
Մինչ չունդունեմ փրկության նըշան
Մինչ ունդունվիմ յես յերկնքից։

### 29. Гус. 116.

1. Յես հոգնած յեվ բեռնավորված.
Տեր, դեպի Քեզ յեմ դիմում
Յես Քեզանով միայն փրկված՝
Հանգստություն յեմ գտնում։



Ով Հիսուս, գալիս յեմ Քեզ մոտ,
Վոր տաս ինձ խաղաղություն.
Ով Հիսուս, յես Քեզ եմ կարոտ,
Դու տաս ինձ հանգստություն։
2. Ախ ով Քրիստոս, իմ փրկիչը,
Յես խնդրում յեմ Քեզանից.
Դու պահպանիր վոր փորձիչը
Զը շեղե ինձ Քո ճամփից։
3. Քո հայրական գոգում հավետ
Հոգիս գտնում է հանգիստ.
Այնտեղ ամեն փորձանքից հետ
Դրախտում կը հանգչեմ միշտ։
4. Ախ, ոգնիր ինձ, միշտ մոտ յեղիր
Այս յերկրային կյանքի մեջ.
Յեվ իմ սրտում, ով Տեր, պահիր
Քո լույսը վառ և անշեջ։

### 30. Гус. 108.

1. Տեր ձայնըդ կը լըսեմ.
Վորով ինձ կանչում յես.
Կը գամ որ ինձ սուրբ արյունով
Լըվաս մեղքից մաքրես։
Տեր Քեզ մոտ կը գամ
Հիմա ինձ լիվա
Ինձ մաքրե սուրբ արյունով
Հեղյալ ի գողգոթա։
2. Տկար և պեղծ կը գամ,
Դու Տեր ինձ ույժ կըտաս,
Յեվ վոր ձյունից սպիտա լինեմ
Սուրբ արյունովդ կը լվաս։

3. Ինձ, Տեր, վստահության,
Հոյսս և հավատս,
Կը հրավիրես, խաղաղության
Յեվ կատարյալ սիրո.
4. Թող հարձակվին փորձանք,
Կը տաս ինձ հաղթանակ,
Կը տաս, ինձ շնորհք և ըսփոփանք,
Վերջն ել փառաց պըսակ:
5. Փառք քավության արյան,
Փառք Քրիստոսի շնորհաց,
Մեր կատարյալ արդարության
Յեվ անվախճան կենաց:

## 31: Гус. 115.

1. Ինչ պես վոր յեմ մեղքով լեցուած,
Խեղճ մեղավոր խպառ կորած,
Աչքերս դեպի փրկիչը ուղած
Գառն Աստծու Քեզ մոտ եմ գալիս:
2. Ինչպես վոր յեմ չըսպասելով,
Հոգիս սըրբել ունայն հույսով,
Քո սուրբ արյան լոկ նայելով
Գառն Աստծու, Քեզ մոտ եմ գալիս:
3. Ինչպես վոր յեմ, շատ տանջված,
Յեվ բազմաթիվ, մեղքով պատած,
Այս ու այն կողմ միշտ տատանված
Գառն Աստծու Քեզ մոտ եմ գալիս:
4. Ինչպես վոր եմ, Տեր, Դու գիտես,
Իմ մեծ մեղքերս պիտի ջընջես,
Աղտոտ հոգիս Դու կը սըրբես
Գառն Աստծու Քեզ մոտ եմ գալիս:



5. Ինչպես վոր եմ, այնպես կը գամ,
Շնորհիր ինձ, վոր Քեզ մոտ մնամ,
Տեսնեմ յերեսըդ հավիտյան,
Գառն Աստծու Քեզ մոտ եմ գալիս:

## 32. П. Х. 36.

1. Տեր այցելությամբ յերկիրը
Շուտ կանես խիստ պտղաբեր,
Հիմա որհնության անըրեը
Թող հեղվի իմ վրաս ել Տեր.
Վրաս ել Տեր, վրաս ել Տեր,
Թող հեղվի իմ վրաս ել Տեր:
2. Մի անցնիր ինձնից ով հայրս,
Կորածիս ինքդ փնտռե.
Ջրիպես ներե մեղքերըս,
Գըթությունդ ինձ պարգև ե.
Ինձ ել Տեր, ինձ ել Տեր,
Գըթությունդ ինձ պարգև ե:
3. Մի անցնի ինձնից Փրկիչըս,
Քեզ սիրեմ, Քեզ հարեմ,
Քաղցր ձայնդ լսե ականջըս,
Ինձ կանչե, Քեզ հետև եմ.
Ինձ ել Տեր, ինձ ել Տեր,
Ինձ կանչե, Քեզ հետև եմ:
4. Ուրիշներ Քո ձայնդ լսել չեն,
Յեվ գտել յեն փրկություն.
Քո մեծ շնորհքդ ընդունել են,
Տուր ինձի ել որհնություն:
Ինձ ել Տեր, ինձ ել Տեր,
Տուր ինձի ել որհնություն:

5. Թեև քեզ հաճախ մոռցել յեմ
Սուրբ հոգիդ ինձնից չանցնե
Քեզ մեղքովս վշտացուցած յեմ,
վոր ներե և ինձ փրկե։
Ինձ էլ Տեր, ինձ էլ Տեր,
Վոր ներե և ինձ փրկե։

## 33. Тим. 92.

1. Ո՞ւր է Հիսուս իմ փափագը,
իմ միակ բարեկամը.
Վա՜հ ո՞ւր է նա արդյոք գնացել.
Ո՞ւր կարեմ նորան գտնել։
2. Ո՜հ անձն իմ անչափ տրտմած է
Մեղաց ամեն ցավերով.
Ո՞ւր է Հիսուս, վոր նա սիրե,
Գիշեր ցերեկ վորոնե։
3. Ահով, ցավով պատած կոչեմ,
Ո՞ւր է արդյոք Հիսուսն իմ.
Սրտիս մեջ յես հանգիստ չունեմ,
Մինչև նորա մոտ լինեմ։
4. Նա փրկում է մեղք ու մահից,
Փրկում է ահ ու ցավից.
Յերբ նորա սիրտն իմ միշտ տանջեն
Տերն կազատե ցավերեն։

## 34.

1. Յես լսում եմ ձայնդ, ով Հիսուս,
Նորա համար կը գամ
Սիրուն քո ձայնդ լըցրեց ականջս.
Ինչպես յես չարտորամ։



Կը գամ, կը գամ ինձ մի մերժիր,
Ույժ կաղաչեմ, ով Տեր.
Արժանացրու հոգնած հոգիս
Սուրբ հանգստյան յերգնից։
2. Հոգիս կյանքս է ձանձրացած՝
Այս չոր ձորին եղերքն.
Իմ սրտիս ներսն է խռոված՝
Մեղքիս ճնշող բեռեն։
3. Ունայն տեղ ես շատ ջանք արի
Փրկել ինձ իմ Ույժովս.
Հանցանք սրբել յես չը կրցի,
Բարեգործությունովս։
4. Քո սուրբ արյունըդ թափվեցավ
Խաչափայտի վերա.
Բոլոր մեղքերս անդ բավեցավ
Արդար գլխիդ վերա։
5. Վորչափ սուրբ եր արդեն յեկան.
Քո տեսությունն վայլել
Դուն յես ճամպան վորով կըցան,
Այն սուրբ հանգիստն մտնել։

## 35.

1. Յես հավիտյան հանգիս կլնեմ
Միայն քեզ մոտ Հիսուս.
Քո վերքերիցդ կյանք կը ստանամ,
Փրկիչ դու յես իմ հույս։
Հավատում եմ, հավատում եմ
Որ Հիսուսի արյամբ
Յեվ նրա արյամբ, անգին արյամբ
Մեղքից ազատ կլինեմ։

2. Խաչված Փրկիչս, և իմ Աստուածս,
Մեղքի բացված աղբյուր,
Քո արյունդ սրսկե վրաս.
Պահե ինձ միշտ մաքուր։

3. Լվա ինձ Տեր, և քոնն արա,
Լըվա յեղիր դու իմս.
Վոչ թե միայն վոտքերս մաքրե
Ձեռքերս, գլուխս և սիրտս։

4. Քո արյունովդ իմ սիրտս սրբե,
Մինչ Քեզ տեսնեմ աչքով.
Փառաց հույսով աչքերս կոցե,
Հոգիս լեցվի սիրով։

## 36. П. Х. 26.

1. Մի անցնիր ինձնից Փրկիչըս.
Աղաղակս լըսի.
Ընդունիր խոնարհ աղերսըս
Մի անցնի ինձնից։
   Ով Փրկիչըս, աղաղակս լսի,
   Ընդունիր խոնարհ աղերսըս
   Մի անցնիր ինձնից։

2. Վո՜հ իմ անարժանությանըս
Թողություն շնորհե,
Յեվ իմ անհավատությանըս
Դու ով Տեր ոգնե։

3. Քո արժանավորությանըդ
Յես կապավինեմ.
Ինձ փրկե, վոր գըթությանդ
Մեծ շնորհքովդ ապրեմ։



Մխիթարությանս աղբյուրը,
Բացի Քեզ ով Տեր,
Թե յերկնի մեջ, թե յերկրիս վրա
Մեկը չեմ ուզեր։

## 37. Гус. 43.

Հիսուս Փրկիչ, Դու իմ Տերը,
Կուրծքիդ վրա յես ինձ տանում,
Յերբ մոտենում յեն ջուրերը
Յեվ փոթորիկ բարձրանում։
   Վո՜հ ինչ լավ է քեզ հուսալը,
   Քեզ յեմ Հիսուս, նուիրվում
   Յեվ բարձրում Քեզ միշտ նայելը
   Շատ և շատ յեմ փափագում.
Պահիր ինձ կյանքի փոթորկից
Մինչ ընթացք իմ կատարվի,
Տար ապահով նավահանգիստ
Յեվ իմ հոգիս ընդունիր։
Ջոկ ապաստան յես չեմ գտնում.
Իմ ապավեն միայն դու յես,
Յեվ ինձ մենակ դու չես թողնում,
Անդադար դու ինձ հետ յես։
Իմ հույս միայն Քեզ վրա է,
Զարիքը ինձնից կանցնի։
Զի թևերիդ շուքի տակն է
Ամեն անգամ իմ մարմնի։
Կատարյալ շնորհք և փրկություն
Հիսուս միայն քեզանում է,
Ախ տուր ինձ դու քո սրբություն,
Վոր քեզ գովեմ բարձրունքն եմ։

6. Դու յես Տեր աղբյուրը կենաց
Վոր ծարավը հանգցնում է,
Յեղիր աղբյուր և իմ սրտի
Վոր հավիտյան բղխում է։

## 38.

1. Յերբ սիրտըս պաղել էր
Յեվ բեռս ծանր էր,
Մեղքի խավարումն էյի կապվել։
Իմ ամոթով յեկա
Յեվ խաչի վոտքն ընկա.
Նախ այնտեղից է վրաս լույս ծագել.
Խաչին մոտ, խաչին մոտ
Ծագեց լույս առավոտ
Յեվ գըտի մեղքերիս թողություն,
Վո՜հ, քո քաղցըր նայվածք
Կյանք է ինձ պարգևած.
Արդ քեզանում է իմ բերկրություն։
2. Մինչ հոգով կույր էյի,
Ինձ անմեղ կարծէյի,
Չեյի վախում յեվ մահվան գեհից.
Ընդա այն ժամանակ
Խաչյալի վոտքին տակ,
Յեվ այնտեղ փրկվեցի խավարից։
3. Արդ խավարն անցել է,
Սուրբ արևն ծագել է.
Յես միայն տեսնում յեմ իմ Փրկչին։
Քեզ յեմ նայում, Հիսուս,
Դու տաս ինձ կյանք և լույս,
Խաչիդ մոտ կյանք գտավ իմ հոգին։

---



# IV, ՔՐԻՍՏՈՆՅԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

## 39. Гус. 247.

1. Յես չեմ ամանչում քարոզել
Խաչյալ Հիսուս Փրկչին.
Նորա պատվերները պահել,
Զորությունն Նրա խաչի։
Խաչին մոտ, խաչին մոտ, հոգով կենդանացա,
Խաչին մոտ իմ կույր աչքերն բացվեցան.
Նորա մոտ յես փրկության լույս տեսա,
Հիմա և հավիտյան յերջանկացա.

2. Յես չեմ ամանչում հրչակել,
Նորանում իմ Աստծուն,
Ով փրկեց ինձ, կամեց շնորհել
Իր սրբության հոգին։

3. Նրան սիրելով չեմ ամանչիլ
Ինչքան ինձ անպատվեն.
Խնդրել, չիմացողին ներել
Համար յեմ Նրա խաչին,

4. Նա չի թողնիլ վոր ամանչեմ,
Թե ապավինեմ նրան.
Յեվ կօգնե վոր միշտ յես հաղթեմ
Չարին աշխարհքիս վրան։

5. Ինչ վոր Նա ինձ խոստացել է
Անպատճառ կըկատարվե.
Նա պահում է այն մեծ օրին,
Ինչ վոր նրան յեմ յես տվել,

## 40. Тим. 72.

1 Ավետարան ուխտի համար
Փրկչի կողմն յենք մենք կանգնած.
Հետևելով Նրա օրինակին,
Բոլորս ել հառաջ, հառաջ։
Յեղբայրությունով միացած
Ինչպես մի նոր ժողովուրդ.
Մեկ սիրտ և մեկ հոգի կազմած
Փրկչի հետ հառաջ, հառաջ։

2. Կռիվն խիստ է, ահռելի կրակ
Յեվ շարժվում յեն շատ գնդեր
Բարձր պահեցեք մեր դրոշակ
Ո՜վ Քրիստոսի զինվորներ։

3. Աշխարհքում կյանք անտարբեր է.
Քրիստոնությունն է թողված.
Պաշտպանության Նրա որենքի,
Յելեք յեղբայրներ միացած։

4. Հավատքի բերդն. դուստր Սիոնի,
Պետք է միասին պահպանենք.
Յեվ զենքերով Գեդեոնի.
Թշնամու ույժը կոտրատենք։

5. Բարի կռիվ, փրկության գործեր
Համարձակ մենք կատարենք.
Յեվ Քրիստոսի սիրո վրաններ
Աշխարհքիս վրա լայնացնենք։

## 41 Гус. 359.

1. Քաջ յեղեք ով յեղբայրներս,
Մոտ է ոգնություն



Վերից յերևում է նշան,
Մոտ է հաղթություն։
«Շուտ կը գամ» ասում է Տերը,
«Բերդը պահեցեք»
Կը պահենք Տեր Քո շնորքովը
Պատասխան տուեք։

2. Մեր հանդուգ թշնամիները
Խումբով գալիս յեն.
Յեվ նորանց չար զորապետը
Ինքն է սատանան։

3. Փառավոր է մեր դրոշակը,
Փողը կը լսենք.
Մեր զորապետի անունով
Պիտ անշուշտ հաղթենք.

4. Դառն յերկար է պատերազմը,
Հոգ չե դիմացեք.
Մեր անհաղթ զորագլուխը
Մոտ է, քաջ յեղեք։

## 42. Гус. 332.

Յեղբայրք, ոն առ ի գործ, մեր Տիրոջ ծառայենք,
Գնանք Նորա ճանապարհ և ուրախ հետևենք,
Աստծո զորությունով, վոր մեզ նորոգում է,
Ջանք անենք, կատարենք, ինչ վոր սեր ասում է։
Յեվ լինենք միշտ ուղիղ,
Հետևենք մեր Տիրոջ,
Հաղթություն, փրկություն,
Ուստի գործենք մինչև Տերն կը գա։

Տերն ինքն է մեզ գրել, իր այս մեծ սուրբ գործին
Փրկություն քարոզել, վոր բերավ աշխարհքին.

Բարի լուր պատմեցեք. ամենքին տացեք:
Պատրաստ է փրկություն, յեկեք ընդունեցեք:
3. Կորածին որենք, ձեր Տիրոջ պես արեք,
Թողվածին մխիթարեք և խեղճին ընդունենք,
Լույս բերեք խավար տեղ, մարդիկ կույր չին
Թշնամուն ցույց տուեք թե ինչ է Քրիստոնյա
4. Ջանք արեք գործի մեջ, Աստծո փառքի համա
Ջար կեցեք թշնամուն և նրա զորք անհամար.
Այստեղ գործ կա մեզի, յեղբայրք շուտ կատարե
Յեվ հետո Տիրոջ մոտ անվերջ հանգիստ կառնե
5. Ցնծացեք, ով յեղբայրք, հանգիստ յերանելի
Մեզ սպասում է շուտով ի մեջ սուրբ յերկնքի
Ահա Տերն գալիս է, վոր տա հաղթողին վար
Ձեռքին արմավենի և գլխին մի պսակ:

## 43. П. Х. 76.

1. Փայլուն պողպատից չե մեր սուրն
Մարդկային մուրճով չե ձուլած,
Նա ստեղծված է արդարությամբ,
Յեվ Տերիցն է մեզ պարգևած:
Նա չի սպանում մարդկանց մարմին,
Չի թափում մեր յեղբոր արյունն.
Նա քննում է սիրտն և հոգին,
Սպանում չար անհավատություն:
2. Մեղքի շղթաներն է կտրում,
Յեվ գերիներին ազատում.
Խիտ անտառով առաջնորդում,
Մեզ դեպ ճշմարտության տանում:
Փայլուն կայծակի նմանությամբ
Նա ճեղքում է թշնամու շարքերն.



Տերիցն է այս սուրն, զորությամբ,
Պետք են արդյոք մեզ այլ որերն:
3. Յեկեք մեր սուրը լավ սրենք,
Սիրո և աղոթքի կրակով.
Համարձակ նորան մենք պարզենք,
Մեր Տիրոջը հետևելով:
Վոչ մի քայլ հետ մի նահանջեք
Ամալեկ զորքերն նվաճված են.
Համերաշ հառաջ շարժվեցեք,
Հաղթություն որը գալիս է:

## 44 Гус. 331.

1. Վեր կաց, կը գա գիշերը, վեր կաց, շուտով լույս է.
Գործիր վաղ առավոտը, քանի վոր ուշ չե.
Տես արեգակի լույսը, գործիր ժամանակ է,
Վեր կաց, կը գա գիշերը, եվ արդեն ուշ է:
2. Վեր կաց կը գա գիշերը, վեր կաց դու կես որին,
Նուիրիր թարմ ուժերը Հիսուս Քրիստոսին:
Յեղբայր սկսիր դու գործը: ուրիշ բան ունայն է,
Վեր կաց կը գա գիշերը, եվ արդեն ուշ է:
3. Վեր կաց կը գա գիշերը, արեն մար է մտնում
Տես ահա իրիկունը է որն եվ անցում.
Վեր կաց մինչ վերջին շունչը ջանք արա, աշխատե.
Վեր կաց կը գա գիշերը, եվ արդեն ուշ է:

## 45. П. Х. 86.

1. Տեր Հիսուսն անցնում է ջուր ու ցամաքով
Պաշտում յեն շատերը սրտով, յեռանդով,
Վորին վոր հոգին սուրբ նոր մարդ է արել,
Քրիստոսի դրոշակի տակն է նա կանգնել:

«Եղբայրք, քույրեր, ամենքդ յեկեք,
Մեկ մեկ մարդկանց Տիրոջ մոտ բերեք․
Եղբայրք, քույրեր, ամենքդ յեկեք,
Մեկին մյուսից հետո Տիրոջ մոտ բերեք»։
2. Աստուծո քահանաներ, խմբով յեկեք,
Սուրբ ձեռքեր դեպի յերկինք միշտ բարձրացրեք
Գործեք և աղոթեք սիրով, յեռանդով,
Կույրեր և կաղերը ներս բերեք շուտով։
3. Թե ուժերըդ սպառեն սիրտըդ թուլանա,
Սուրբ հոգին պատրաստ է զորություն կը տա,
Նայիր դու Հիսուսի խաչի գըրոշակին,
Յեվ քաջությամբ կըռվիր կըրկին և կռվիր։
4. Ինչ մեծ բաղդավորություն է մեզ համար,
Շատ հոգիներ շահել միշտ և անդադար,
Յերբ լըցված լինք փրկյալների շարքը․
Հետո կը առնվի գառի հարսանիքը։

## 46. Гус. 361.

1. Գնա՞մ պիտի դարտակ ձեռքով
Յեվ Տիրոջ առաջ կանգնե՞մ․
Չե՞մ կարող տանել վոչ մեկը,
Մեկ հոգի այնտեղ չտանե՞մ։
Գնա՞մ պիտի դարտակ ձեռքով
Հիսուսի առաջ կանգնեմ,
Չե՞մ կարող տանել ոչ մեկը,
Մեկ հոգի այնտեղ չտանե՞մ։
2. Ինձ փրկել է Տեր Հիսուսը,
Չեմ վախում մահի ձորի,
Բայց դարտակ Նրան յերևալը
Սա է տրտմեցնում խեղճիս։



3. Թե դառնան կորած տարիքս,
Մի անգամ էլ ինձ տրվեն,
Վո՜հ այն ժամ Նրան ծառայելըս
Ինձ համար մեծ բաղդ կլինի։
4. Վո՜հ գործեք իմ եղբայրներըս,
Ձեր Փրկչի համար գործեք,
Մինչ ծագում է արեգակը,
Մինչ ցերեկի մեջ կապրեք։

## 47. П. Х. 63.

1. Ուղարկիր, Տեր պատմել նրանց,
Աստծու սերի մասին մարդկանց․
Ուղարկեց Նա վորդուն յերկնից,
Կրկին և կրկին պատմիր։
Կրկին և կրկին պատմիր (2 անգամ)
Այն բարի լուրն հիսուսիցը,
Կրկին և կրկին պատմիր։
2. Ուղարկիր Տեր, պատմել նրանց,
Քրիստոսի սերիցը մարդկանց․
Ինչպես մեզ մոտ իջավ յերկնից,
Կրկին և կրկին պատմիր։
3. Ուղարկիր Տեր, պատմել նրանց,
Քրիստոսի հեղված արյունից․
Վոր հարյավ վերացավ յերկինք,
Կրկին և կրկին պատմիր։
4. Ուղարկիր Տեր, պատմել նրանց,
Նրանից տրված փրկությունից․
Վոր ապրում է նա մեջ մարդկանց
Կրկին և կրկին պատմիր։

## 48. Гус. 358.

1. Վառ փայլում է Աստծու սերը
Փրկչի պայծառ երեսից.
Տեր, ոգնի՛ր մեր լապտերները
Պատրաստ պահենք այս օրից։
Թող քո լույսը ճառագայթի
Հուզված ծովի ափի վրա,
Վոր գուցե մի խեղճ նավաստի
Մահից փրկվել կարենա։

2. Ամեն տեղ կա թանձր խավար.
Ալիքները գոռում են.
Յեվ շատ ճամփորդ սարսափահար
Քո լույսին կարոտում յեն.

3. Վառ պահիր միշտ քո լապտերը
Վո՜հ տես ծովի յել և եջ.
Լույս տուր, վոր խեղճ նավորդները
Չը կորչեն խավարի մեջ։

---

# V. ՔՐԻՍՏՈՆՅԱԿԱՆ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ.

## 49. Ким. 20.

1. Առաջնորդիր ով Յեհովա,
Մեզ անապատի միջով.
Մենք տկար յենք, Դու զորավոր,
Տար մեզ զորեղ բազուկով.
Մանանայով, մանանայով
Կերակրիր ժողովուրդիդ։



2. Հավիտենական վեմը բացիր,
Վոր կենաց ջուր է բղխում.
Կրակի սյունով մեզ պաշտպանիր,
Թշնամին յերբ մեզ է պատում.
Ով մեծ փրկիչ, ով մեծ փրկիչ.
Յեղիր վահան և ասպար։

3. Հորդանանի ափում լինենք
Գետի միջով մեզ անցուր,
Վոր Քո հոգնած ժողովուրդը
Քանանի յերկիր մտնե.
Գոհության յերգ, գոհության յերգ
Հետո Քեզ վեր բարձրացնե։

## 50. П. Х. 35.

1. Սուրբ հոգի, առաջնորդիր,
Դեպի յերկինք մեզ դգիր·
Քո զորեղ բազուկներով
Տար մեզ այս անապատով.
Վո՜հ ի՜նչ բեկվում է հոգիս,
Քո մեղմ ձայնը լսելիս.
Ասա ինձ «յեկ, Քեզ տանեմ
Դեպի նոր յերուսաղեմ»։

2. Դու յես մեծ խորհրդատու
Յեվ պատրաստ մեզ ոգնելու.
Փարատիր ամեն կասկած
Յեվ խավարն համատարած,
Յերբ փոթորիկ բարձրանա
Յեվ հուսո աստղն մթնանա,

3. Յերբ դադրեն մեր որերը
Յեվ մեզ կանչես դեպ վերը,

Յերբ փլի մեր վրանը
Յեվ անցնենք հորդանանը,
Յերբ տեսնենք բացի արյուն
Չիք ուրիշ բան մնայուն,

## 51. Гус. 375.

1. Ով Հիսուս. Դու յերբ պիտի գաս
Յեվ մեր կարոտության վերջ տաս,
Փափակում յենք յերեսդ տեսնել,
Ինչպես Դու յես Քեզ պես լինել։
2. Ով Հիսուս Դու մեզ սիրել յես,
Քո արյունով լուացել ես
Կամենում յենք Քեզ ծառայել,
Հավիտյան Քեզ փառաբանել։
3. — Ով Հիսուս Դու խոստացել յես,
Թե դարձյալ մեզ մոտ գալու յես.
Մենք էլ սպասում յենք որե ցոր
Քեզ, ով Փրկիչ, մեր Թագավոր։
4. Ով Տեր, աշխարհքս անապատ է
Զոր ու ցամաք մի յերկիր է.
Վո՞հ Քո հոգով դու մեզ լեցրու
Յեվ մեզնից ջուրեր բղխեցրու։
5. Ով Տեր, հեղիր Դու Քո սերը
Վառիր հուրով մեր սրտերը.
Որ մեր Նարդոսն ազնիվ հեղվի,
Քո տան մեջ բուրմունք տարածվի։
6. Ով Հիսուս, յեկ Քեզ սպասում յենք,
Դուռների մոտ Քեզ տեսնում յենք.
Պահիր մեր լապտերները վառ,
Առավոտյան աստղ պայծառ։



## 52. Гус. 237.

1. Ավելի մոտ, ով Տեր,
Միշտ Քեզի մոտ,
Թե սուտ նեղություններ
Շատ կան ինձ մոտ.
Թե ունիմ խաչ, տանջանք,
Սա է սրտիս փափագ
Ավելի մոտ ով Տեր,
Միշտ Քեզի մոտ։

2. Թե գիշերն ինձ հասնի
Յակոբի պես,
Յեվ իմ բարձս լինի
Զոր քարի պես.
Այստեղ էլ իմ երազս
Յեվ իմ սրտի կարոտս

3. Թե և նեղ ճանապարհն
Խիստ դժվար է,
Բայց երկնային քանան
Մեզ տանում է.
Գեղեցիկ հրեշտակներ
Յերգում, են լավ երգեր

4. Յեվ յերբ անցնի գիշերն,
Արևն ծագի,
Դարձյալ իմ սրտիս սերն
Առ Քեզ կլինի.
Բեթել ես կը շինեմ
Յեվ ցնծալով կը յերգեմ։

## 53 Гус. 250.

1. Դու իմ ոգնություն ես.
Գըթառատ Տեր,
Ինձ մեղքից պահում ե
Քո անհուն սեր:
Տեր, յես քեզ միշտ պետք ունիմ,
Պետք ունիմ ամեն ժամ,
Քո սուրբ ներկայությունը
Թող միշտ ըզգամ:
2. Դու իմ ոգնությունս յես
Ինձ մոտ եղիր.
Մինչ մահ հավատարիմ
Դու ինձ պահիր:
3. Դու իմ ոգնությունս յես,
Յեվ ապաստան.
Քեզանով ապահով եմ
Միշտ հավիտյան:
4. Դու իմ ոգնությունս յես,
Կառավարիր.
Ինչպես խոստացել յես
Ինձ մի թողիր:
5. Դու իմ ոգնությունս յես,
Տեր թագավոր.
Յեվ յես քո մեծ ուժովդ
Յեմ զորավոր:

## 54. Гус 206.

1. Յերանելի այն որն ե, Տեր
Վոր յես բաժինըս քեզ արի.



Յերբ յես տեսա անհուն քո սեր
Յեվ քո գութը զարմանալի:
Յերանելի այն որն ավլի,
Վոր Տերն մեղքերս ներեց ինձի.
«Արթուն կաց դու, աղոթք արա»,
Ասաց Տերը «յեվ միշտ ցնծա».
Յերանելի այն որն ավլի
Վոր Տերն մեղքերս ներեց ինձի:
2. Իմ սիրտս բոլոր նորան յեմ տամ
Վոր իմ սիրույս ե արժանի,
Իր սեղանին յերբ մոտենամ,
Ուրախ յերգով իր տուն լցվի:
3. Ահա փրկչիս յես ուխ արի,
Տիրոջն յեմ յես և նա իմս ե
Ինձ նա կանչեց իր մոտ գնացի.
Յերբ իմացա նորա ձայնն ե:
4. Փրկչիդ վերա հույս դնելով,
Հանգիստ յեղիր, խռոված հոգիս.
Ամեն բարիք վայելելով,
Մի հեռանար նորա մոտից:
5. Իմ ուխտս ով հիսուս փրկիչ,
Ամեն որ նորոգեմ պիտի.
Յեղիր դու ինձ մխիթարիչ,
Յերբ նեղություն հասնե ինձի:

## 55. (Бог ест любов.)

1. Տեր Աստուած սեր ե, փրկում ե նա ինձ.
Տեր Աստուած Սեր, և Սիրում ե ին:

Ուստի էլ ասում յեմ.
Տէր Աստուած սէր է,
Տէր Աստուած սէր է,
Սիրում է ինձ։
2. Յես կապված էի մեղքի կապերով,
Յես կապված եիանոգնական։
3. Հիսուսին ղրկեց փրկչին սիրելի.
Հիսուսին ղրկեց ինձ ազատեց։
4. Իմ Հիսուս փրկիչ իր անձը զոհեց,
Իմ Հիսուս փրկիչ մեղքս քավեց։
5. Քեզ գովել կուզեմ սէր հավիտենական
Քեզ գովել կուզեմ քանի վոր կամ։

## 56. Гус. 292

1. Թող ուրախ լինեն սրտերն մեր
Յեվ գոհությունով լցված,
Հայր կանչում է մեզ վորդիներ,
Իր վորդովն ենք մենք փրկված։
Մենք ուրախ յենք մենք ուրախ յենք,
Յեվ ամեն օրեր ուրախ,
Կյանքի ճանապարհը գեղեցիկ է,
Ուրեմն լինենք միշտ ուրախ։
2. Հայրն իր ձեռքով տանում է մեզ,
Պատերազմում պաշտպանում,
Նորա շնորքը տալիս է մեզ
Ինչ վոր պետք է մեր կյանքում։
3. Յերբ Նորանից հեռանում յենք
Խավարում է մեր շուրջը.
Այս ու այն կողմ տատանվում յենք
Յեվ տրտմում է մեր անձը։



4. Բայց արդարները կը ծաղկեն,
Չեն շեղվի ճանապարհից.
Ուստի տիրոջ թող ծառայեն
Յեվ հեռու կենան մեղքից։

## 57. Гус. 246.

1. Ինչպես բարեկամ է Հիսուս
Ինչպես է նա բարձրացել.
Աստուծո մոտ միջնորդել է,
Մեզ համար բարեխոսել։
Ինչ մեծ կորուստ յենք մենք անում
Յերբ գործում ենք մեր ուժով,
Յերբ Հիսուսին մենք չենք դիմում
Յեվ չենք խնդրում աղոթքով։
2 Թե սպառնում է մեզ թշնամին
Յեվ փոթորիկ բարձրանում,
Չունինք պատճառ մենք յերկյուղի,
Յերբ աղոթքում յենք գտնվում։
Տէր Հիսուս հավատարիմ է,
Նա կանգնած է մեր կողմում.
Յեվ զորավոր նա փրկիչ է,
Յերբ նորան յենք աղոթում։
3 Յերբ հոգսերով մենք բեռնված յենք,
Թե ուշ լինի թե կանուխ.
Տէր Հիսուս անշուշտ մեզ կոգնե,
Թե սիրտ ունենք աղաչող։
Բարեկամներ մեզ թողել են,
Մեր օգնականն է աղոթքն.
Հիսուսն է միայն մեր մարգարեն
Քահանան և թագավորն։

## 58.

1. Հիսուս միմիայն իմ սիրտ պիտ ունենա,
Հիսուս միմիայն այնտեղ բնակի,
Իր սիրույն վոչ մի բան հավասար չկա,
Միայն Նորա մոտ հոգիս կը հանգչի։
Եվ յես չեմ հոգալ, եվ չեմ տրտնջիլ,
Հիսուս իմ յեղբայր ինձ մոտ է ներկա.
Նաև խոստացավ իմ ձեռքից ինք բռնել,
Յեվ տանել այնտեղ ուր միշտ հանգիստ կա։

2. Հիսուս միմիայն ինձ մեղքից ազատեց,
Հիսուս միմիայն ինձ բարիք արավ.
Նորա մեծ սերը իմ սիրտը կոտրատեց
Յեվ ապա խաղաղության տեղ դրավ։

3. Հիսուսին միայն իմ կյանք կպատկանի,
Նա յէ իմ փեսան և յես հարս Նորա,
Միայն Նորա կամք միշտ պիտի կատարեմ
Յեվ Նա սպիտակ հանդերձ ինձ կը տա։

4. Հիսուս միմիայն ինձ ույժ կպարգևե,
Յերբ պատերազմի մեջ տկարանամ
Նորա կենաց աղբյուրից յես կխմեմ
Կյանք և զորություն միշտ ամեն անգամ

5. Հիսուս միմիայն ինձ հետ պատերազմեց,
Կանե իր մոտը պայծառ յերկինքում.
Կցնծամ այնտեղ առանց խանգարման
Հանգչելով ապահով իր սուրբ գրկում։

## 59. Гус. 285.

1. Թե անցնում է իմ կյանք հանդարտ գետի պես
Թե ալիքների հետ մրցում.



Ինչ վիճակ ունենամ յերկրի վերա յես,
Քո ձեռքիտ մեջն եմ միշտ հանգչում։
Դու ինձ հետ։ (3. անգ.) Յես ով Տեր,
Քո ձեռքիդ մեջն յեմ միշտ հանգչում։

2. Թե հարձակվեն թշնամիները բազում,
Յես ինչու պիտի վախենամ.
Աստուած ինձ հետ է, Նա և ինձ պահպանում
Անդադար պիտի գոհանամ։

3. Իմ մեղքերը բազմաթիվ Նա վեր առավ,
Յեվ խաչի վերա բեվեռեց.
Այնտեղ իմ փրկիչըս իմ տեղյակ մեռավ
Իր սուրբ արյունով ինձ քավեց։

4. Իմ կյանքն այժմ իմ Տիրոջն է պատկանում,
Յես Նորան պիտի ծառայեմ,
Աշխարհքում արծաթ, վոսկի չեմ վորոնում
Միայն թե հոգիներ շահեմ։
Տեր, յես սպասում յեմ Քո գալուն ամին որ,
Շուտ յեկ, յես Քեզ յեմ կարոտում.
Վո՜հ, յերբ պիտի հասնի յերանելի որ,
Յեվ Քեզ հանդիպեմ յես ողում։

## 60.

1. Թե փորձել յես արյան զորությունն՝ առա,
Լուացո՞ւած յես դու Փրկչի արյամբ.
Կարո՞ղ յես դու Նորան վստահել հիմա,
Լուացո՞ւած յես դու Փրկչի արյամբ։
Մաքո՞ւր յես, մաքուր եմ յես
Յուր արյամբ, յուր արյամբ.
Լուացո՞ւած յես դու Փրկչի արյամբ,
Յուր արյամբ յեն հանդերձք իմ

Անարատ, անբիծ և ճերմակ,
Լուացուած յեմ յես Փրկչի արյամբ։
2. Արդյոք հետևո՞ւմ յես դու Հիսուսին ճիշտ,
Լուացո՞ւած յես դւ Փրկչի արյամբ.
Խաչին մոտ պառե՞լ յես կատարյալ հանգիստ,
Լուացուա՞ծ յես դու Փրկչի արյամբ։
3. Ո՛վ արդար հոգի, խնդա միշտ Հիսուսով.
Լուացուա՞ծ յես դու Փրկչի արյամբ,
Յեվ նորա հետ կապուա՞ծ յես հաստատ սիրով,
Լուացուա՞ծ յես դու Փրկչի արյամբ։
4. Թե փրկուա՞ծ յես հիսուսով քո մեղքերից,
Լուացուա՞ծ յես դու Փրկչի արյամբ,
Կը վայելե՞ս պատրաստուած այն հանգստից,
Լուացուա՞ծ յես դու Փրկչի արյամբ։
5. Իմ մեղքըս ներուած է, այդ յես գիտեմ հաստատ,
Լուացուա՞ծ եմ յես Փրկչի արյամբ.
Դեպի յերկինքը ճամպա ունիմ ազատ,
Լուացուա՞ծ յեմ յես Փրկչի արյամբ։

## 61. Гус. 384.

1. Թե չըստանան այստեղ լուծում
Քո շատ հեղած արտասուքներ,
Պայծառ լուսո այն աշխարհքում,
Այնտեղ կտեսնես միտքըն ինչ էր։
Հուսա Աստծուն և համբերիր,
Թե շատ լինեն փորձություններ,
Մի վըհատիր, հաղթող յեղիր,
Այն տեղ կտեսնես միտքըն ինչ էր։
2. Անդ կը կապվեն պատռած կապեր,
Կը միանան բաժանվածներ.



Ինչ վոր բընավ չես հասկացել,
Այնտեղ կտեսնես միտքն ինչ էր։

3. Թե վոր յերբեք քո կյանքիդ մեջ
Պայծառ արևը չը ծագեր,
Յեվ դու ապրես սև ամպի մեջ
Այնտեղ կտեսնես միտքն ինչ էր։

4. Թե վոր ամեն քո փափագներ
Իրար յետքից մեկ մեկ մերժվեր,
Չիք դառնային ամեն հյուսե՞ր,
Այնտեղ կտեսնես միտքն ինչ էր։

5. Քո բարեկամ հավատարիմ,
Քեզ մոտ է նա ամեն որեր,
Կառաջնորդե, գիտե ուղին.
Այնտեղ կտեսնես միտքն ինչ էր։

## 62. Гус. 205.

1. Լսիր սիրելիս և ուսիր այս խոսքը,
Վոր Քեզ որհնություն կտա,
Կրկնիր և հաղորդիր ամեն մարդկանց
Հիսուս ինձ ազատում է (3 անգամ)
Այո, հիսուս ինձ միշտ ազատում է,
Հիսուս ինձ ազատում է։

2. Յեթե քո մեղքեր կամիր ու ծանր յեն,
Խղճմտանքդ վիրավորուած,
Հավատքով կրկնիր յերբեք մի մոռնար

3. Յեթե աշխարհքը քեզ փորձել կամի,
Սատանան վրադ հարձակվի,
Դու այս խոսքը կրկնիր և մի վախիր

4. Յեթե նեղությանց արտասուքները
Այրեն լըվան քո այտերըդ,
Աստուծուն նայելով վստահությամբ ասիր:

5. Թե դու հասնիս մահվան խավար ձորին
Ասիր վերջը ցնծությամբ.
Գնում եմ գեպի փառքը ուրախ եղեք:

## 63. (В горнем ущельи укройся).

1. Թռչունի պես արագնթաց
Թռչում են մեր րոպեներ.
Մենք չենք վախում, մոտ է Աստուած,
Հավատարիմ է մեր Տեր.
Նա կաթոգին մեզ սիրում է:
Յերբ մեր հայրը մեզ պատժում է,
Նա նույնպես և խնամում է.
Սրբում է մեր արցունքներ (2 անգամ):

2. Թե թունավոր հողմեր փչեն
Շարունակ այս աշխարհքում,
Տիրոջ ձեռքերն կը պաշտպանեն.
Նեղության րոպեներում:
Նա է աստղը լուսապայծառ,
Նա լույս է տալիս վառի վառ,
Կը տանե մեզ տուն անպատճառ.
Նա մեր լույսն է խավարում (2 անգամ):

3. Ուստի հանդարտ առաջ նայենք.
Դեպի գալու օրերը.
Յեթե մեր չոր ապավինենք.
Կը հասնենք շուտով վերը.



Ահա, մոտ է այն ժամանակ,
Յերբ Տերը մեզ փուշի տեղակ
Կը տա ոսկե թագ և պսակ,
Անդ կըլռեն ալիքները, (2 անգամ):

---

# VI. ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ.

## 64 ГУс. 405.

1. Մենք կանգնած յենք գետի ափին,
Մյուս յեզերքում հեռուից.
Մենք տեսնում յենք կենաց յերկիրն
Մեր Փրկչի սուրբ խոստումից:
Ուստի ապրենք, մենք հավատքով
Մինչ Տերն անցնի Յորդանան.
Յեվ նա ինքը իր սուրբ ձեռքով
Մեզ կտանի վերին քանան:

2. Արևի փառքով փայլում է
Վերին յերուսաղեմն նոր,
Սուրբերի յերգեր լսում յեն,
Լեզուներով անսովոր:

3. Արդեն Սուրբերից շատերը
Անցել յեն մյուս սուրբ յեզերք.
Յեվ գալիս յեն մեր ժամերը,
Յերբ կանցնենք այնտեղ և մենք:

4. Մահուան շուք կա, մութ գետի վրա,
Բայց նեղությունների մեջ.
Գիտենք, վոր մեզի հանգիստ կա.
Փառի արքայության մեջ:

## 65. Гус. 399.

1. Փայլում է մի յերկիր հեռուվից,
Հավատո աչքը սա տեսնում է,
Բռնած իր ժողովուրդի ձեռից
Տեր Հիսուս այն յերկիր տանում է։
Շատ շուտով ցնծալով,
Մենք էլ պիտի այնտեղ ներս մտնենք։

2. Ամենքը ուրախ և բախտավոր
Յերգում են մեր փրկչին մեծ անուն,
Զրքացան հոգսեր նրան բյուրավոր,
Արժանացան քաղցր հանգստյան։

3. Այնտեղ այն մեծ բազմաթիվ խումբը
Սուրբ հոգուց սաստիկ վառվելով,
Աստուծո աթոռի առջևը
Սիրուց սափրված վորդուն գովում են։

## 66. Гус. 385.

1. Արդյոք այն գետին յեզերքը
Մեր վոտները պիտի կոխեն,
Ուր սուրբերն և հրեշտակները
Ցնծությամբ միշտ քայլում են։
Այո մենք էլ անդ միանանք
Բոլոր հրեշտակաց և սրբոց շարքում
Այն հստակ գետի յեզերքին,
Վոր աթոռիցն է բխում։

2. Այն հստակ գետին յեզերքը,
Յերբ խնդալով վոտք կոխենք.
Այնտեղ յերկնային յերգերը
Անդադար պիտի յերգենք։



3. Այն պայծառ գետին յեզերքը
Յերբ կը տեսնեն մեր աչունք,
Աստուծո անբիծ գառնուկը
Պիտի սրբե մեր արցունք։

4. Այն հանդարտ գետին յեզերքը,
Հովիվը կարածացնե
Իր սիրած հոտին գառները,
Յեվ սիրով կառաջնորդե։

5. Այն կենաց գետին յեզերքը
Վերջն է մեր պանդխտության.
Անդ լեցվին պիտի սրտեր մեր
Քաղցրությամբ խաղաղության։

## 67. Гус. 387.

1. Իբր պանդուխտ աշխարքումս թափառեմ,
Աստ չիք հանգիստ, աստ չիք հանգիստ.
Իբր ճամբորդ յերկրիս վրա շրջում եմ,
Բայց որհնվում եմ, բայց որհնվում եմ,
Աչքս եմ անկած փառավոր այն ոստան,
Յերբ մեղքն ու ցավ պիտի անհետանան.
Սիրտս կը հրճվի լսելով Փրկչի ձայն,
Անդ կա հանգիստ, անդ կա հանգիստ։

2. Աստ նեղություն և վշտեր շատ դառն են,
Աստք չիք հանգիստ, աստ չիք հանգիստ.
Աստ կը թողնեմ բարեկամքս ամեն,
Պետք է գնամ իմ հայրենիք։
Վահ, վորչափ քաղցր է խոստում մեր Փրկչին,
Թե որհնյալ են, վոյք ի Տերն ննջեցին.
Արժանացան փառավոր վիճակին,
Անդ կա հանգիստ, անդ կա հանգիստ։

3. Իբր անապատ է աշխարհն վշտալից,
Աստ չիք հանգիստ, աստ չիք հանգիստ։
Աստ վարած կյանքս է, կյանք մեղսալից,
Փրկչիս արյուն քավում է ինձ։
Շուտ չարիքից պիտ լինեմ ազատյալ,
Շուտով պիտ կոչվիմ «հավիտյան որհնյալ»,
Շուտ պիտ գնամ Հիսուսի գիրկն ել,
Անդ կա հանգիստ, անդ կա հանգստ։

## 68. Гус. 401.

1. Պատմում ենք մի յերկրից փառավոր,
Մի յերկրից սուրբ և լուսազեղ,
Դեպի ուր նայում ենք ամեն որ.
Վո՜հ, յե՞րբ պիտի հասնենք այնտեղ։
Վոչ մի ցավ, վոչ մի հոգս,
Վոհ, յե՞րբ պիտի հասնեն այնտեղ։

2. Պատմում ենք փողոցից այն վոսկյա,
Ամբողջ քաղաքն է փառահեղ.
Պարիսպն ու դռներ են մարգարտյա,
Վոհ, յե՞րբ պիտի հասնենք այնտեղ։

3. Պատմում ենք քաղաքից մեծաշուք,
Ուր չի մտնիլ վոսոխն ահեղ.
Վոչ ցավ կա, վոչ հոգս, վոչ արտասուք,
Վոհ, յե՞րբ պիտի հասնենք այնտեղ։

4. Պատրաստիր ինձ, ով Տեր, Սուրբ Հոգով,
Քո յերկնքի համար այստեղ,
Վոր վերջը յես տեսնեմ իմ աչքով
Քո յերկնային փառքը այնտեղ։



## 69.

1. Այն ժամանակ յերբ մեր Տիրոջ փողն յերկրիս վրա հնչե,
Յեվ կը հայտնվի անվախճան արշալույս.
Յեվ ինձ նա բոլոր փրկվածների հետ միասին կկանչե,
Այնտեղ նրա վողորմությամբ պիտ լինեմ յես։
Յերկնային հրավերի ժամին։ (3 անգամ)։
Այնտեղ նրա վողորմությամբ պիտ լինեմ յես։

2. Բոլոր Տերում ննջածների հարության այն մեծ որին։
Բնակվելու յեմ տան մեջ Թագավորի.
Բոլոր սրբերոցն լվացված արյունով հեղյալ վրա խաչի
Կանչելու է, ասելու յեմ «ահա յես»։

3. Տուր գործեմ Քեզ համար Տեր, ամենքին սիրով ծառայել,
Անդադար առավոտից մինչ վերջալույս.
Յեվ յերբ հրամայես ինձ յերկրային ծառայությունս թողնել,
Այնտեղ Քո կանչելուն կը հայտնվիմ և յես։

## 70. Гим. Воз.

1. Վո՜հ, որ անճառ, որ բարեբաղդ,
Սուրբերն յերբ վոր մտնեն դրախտ.
Դաշտերն բուրեղ, յերկինքն անամպ,
Յեվ ոդն լեցված յերգով, ցնծմամբ։
Կրկնող։ Սիրուն դրախտ, ընտիր պարտեզ,
Ուր միշտ սուրբերն ունին հանդես,

Սիրուն դրախտ, վո՛հ, տուն հոգույս,
Ուր կը տիրե Փրկիչս Հիսուս։

2. Անկում ահեղ մեղք և ամոթ
Անդ հավիտյան յեն անծանոթ.
Մահ և անեծք, սուր բոցեղեն
Խորտակված են սուրբոց ցեղեն։

3. Տխրած ճակատ, գլուխ ալեոր,
Թափուր աթոռ, սիրտ սգավոր,
Ու շիրիմներ չի տեսնիլ մարդ
Այն դրախտին մեջ լուսազվարթ։

4. Ավազակն իսկ չը մեռած դեռ,
Ջեղջով կոչեց՝ «հիշե զիս Տեր.
Յեվ Տերն ասաց անմիջապես՝
«Այսօր ինձ հետ դրախտ կը մտնես»։

5. Վո՛հ, որ անճառ, յերբ իջնե Տեր
Պիտի դադրեն անեծք, վշտեր,
Յեվ բյուր սուրբեր, ընարներ առած,
Պիտի գովեն դրախտն փառաց։

## 71. Гус. 316.

Մի յերկիր կա վորտեղ ցնծում
Սուրբերին կը լեցնե,
Յեվ լի ու անվախճան խնդում
Ամեն վիշտ կարտաքսե։
Անդ միշտ ցերեկ ե, միշտ գարուն,
Չը կա գիշեր, ձմեռ.
Ու անթառամ են և սիրուն
Դրախտին մեջ ծաղիկներ։

3. Միայն թե նեղ գետին մահվան
Ալիք կը բաժանե



Այն յերջանիկ բընակարան
Մեր վըշտալից յերկրեն։

4. Այս հորդահոս ջրի այն կողմում,
Հին Քանանու նման,
Կանաչ արտերն են յերևում
Մեջտեղն ել Հորդանան։

5. Մենք յերկչոտներս սարսափում ենք
Այս նեղ գետից անցնիլ.
Ահով յեզերքը կանգնել ենք,
Յեվ վախում ենք քայլել։

6. Յեթե մեզ Մովսեսի նման,
Փասգա յելել տըվեր,
Ել մեզ մահվան ցուրտ Հորդանան
Պիտի չը վախեցներ։

---

# VII. ՆՈՐ ՏԱՐԻ, ԾՆՈՒՆԴ ՅԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

## 72.

1. Յեկեք մեր ճամբան նորոգենք,
Ճամպան դեպ սիոն վոր կերթա.
Հառաջ վազեն կանգ ել չառնենք,
Մինչև վոր Տերն յերևա։
Նորա կամքը ազատ սիրով
Ջանանք անդադար կատարել,
Մինչև կարենանք ապահով
Փրկչին սուրբ հանգիստը մտնել։

2. Այս կյանքն ե նման յերազի,
Վո՛հ թե յերազող արթնանար.
Տարին որվան պես կը թռչի
Րոպեն թե ունի չի կենա

Տարին որվա պես կը թռչի,
Մոտ է ահավոր դատաստան.
Վճիռն էլ անայլայլելի,
Կամ կյանք և կամ մահ հավիտյան։
3. Արդյոք յերբոր մահն ինձ հասնի,
Կարող յեմ յերգել հաղթանակ.
Ասել թե հավատքս պահեցի,
Յեվ թե սպասում է ինձ պսակ։
Վա՜հ թե յերբ թողնեմ այս յերկիր,
Տիրոջ քաղցր ձայնն ինձ ասե,
«Իմ ուրախությունս մըտիր,
Ու իմ աթոռի վրա նստե։

## 73

1. Գիշերային դաշտից վերա
Անթիվ աստղեր փայլում էյին,
Բայց լոկ մեկ աստղեր լույս տալիս
Մեղավորի տխուր աչքին.
Ահա այն զորքը լուսափայլ
Հռչակում յեն փառքն Արարչի,
Բայց չեն կարող փրկչին հայտնել,
Միայն աստղըն բեթղեհեմի։
2. Մի որ յես նավարկում էյի,
Սաստիկ մըրրիկ, խավար գիշեր.
Խոր ահավոր անդունդներում
Իմ նավըս պիտի ընկղմեր.
Ահով արյունս իմ մեջ պաղեց
Մահն դեմ առ դեմ յեկավ ինձի.
Այն ժամ մեկ աստղ խոլույն ծագեց,
Պայծառ աստղըն բեթղեհեմի.



3. Նա միայն լցրեց ինձ հույսերով,
Իմ մեծ վախերըս փարատեց.
Ալյաց ու փոթորկի միջով
Նավահանգիստն առաջնորդեց։
Յեվ յես փրկված ու ապահով
Այսոր և միշտ գովեմ պիտի,
Հավիտենական յերգերով,
Միայն աստղըն բեթղեհեմի։

## 74.

1. Լուռ գիշեր, սուրբ գիշեր.
Ծով ու ցամաք քնել յեն խաղաղ.
Բեթղեհեմի աստղըն մեղմ փայլում է
Յեվ շատ աչքեր այնտեղ դարձընում է,
Ուր վոր փրկիչը ծնավ (2 անգամ)։
2. Լուր գիշեր, սուրբ գիշեր.
Յերգի ձայն կա հովտի վերա.
Հրեշտակների. անթիվ խումբն էյերգում.
Յերգը ցընծման ավետիս է բերում.
«Քրիստոս փրկիչը ծնավ» (2)։
3. Լուռ գիշեր, սուրբ գիշեր.
Ով յերկիր դու էլ արթնացիր,
Դու էլ որհնության յերգերը յերգիր —
«Փառք ի բարձունս Աստուծուն» ասիր.
Այժմ կա խաղաղություն, (2)։

## 75. П. X. 89.

1. Ո՜հ դու բերկրալի, ո՜վ երանելի,
Որ ծընընդյան շընորհաբեր.
Աշխարհքն եր կորած,

Քրիստոս է ծնուած,
Ուրա՛խ, ուրա՛խ կացեք ո՛վ սուրբեր:

2. Ո՜վ դու բերկրալի, ո՛վ երանելի,
Որ ծընընդյան շնորհարեր.
Քրիստոս հայտնուեցավ,
Մեղքըն քավեցավ,
Ուրա՛խ, ուրախ կացեք ով սուրբեր:

## 76. Гус. 257.

1. Ահա մեզի մանուկ ծնավ,
Ծնավ զավակ Դավթի.
Մեզի մի վորդի տըվեցավ,
Ուրախություն յերկրի,

2. Իր հորը աթոռին վերա
Փառքով պիտի նըստի.
Պիտի յելնե ու բարձրանա,
Լինի շատ անուանի:

3. Պիտի կոչուի խորհրդակից,
Հայր հավիտենական.
Հզոր աստուած, և Տեր յերկնից,
Խաղաղության իշխան:

4. Իր տերությունն է հաստատուն,
Անհուն և անվախճան.
Իշխանության մեծանալուն
Պիտի չը լինի սահման:

5. Արքայությունը քրիստոսի,
Ով Տե՛ր շուտով թող գա.
Եվ ցնծությամբ թող յերգըվի
Ամեն տեղ Ովսաննա:



## 77. Гус՝ 231.

1. Լի վշտերով, տառապանքով,
Աչքերը լի արցունքով:
Ահա Հիսուսն ձեռքերն պարզած
Դիմում է հորն աղոթքով:
Արագընթաց մահն գալիս է,
Փրկչից քրտինք վազում է,
Միայն աղոթքի ներշընչումը
Հիսուսին զորացնում է:

2. Բայց մարդկանց մեղքերի համար,
Յերբ Փրկիչն աղոթում եր,
Նա մենակ է գիշերն խավար
Ո՞ւր յեն Նըրա բարեկամներ:
Նրանք քնել յեն, իսկ Նա սիրով
Նրանց համար, աղոթում է,
Արյան կաթիլներով կրտնած
Իրաներին զանչում է:

3. Միք քնիք դուք մինչ արշալույս
Մոտ է, մոտ է մահվան ժամն.
Ահա կը թափվի իմ արյունս
վոր դուք ապրեք հավիտյան:
Ահա դավաճանի դեմքով
Արդեն մատնիչն գալիս է,
Փրկիչն հեզ դիմավորելով,
Նրա քայլվածքին կանգնում է:

4. «Ով ընկեր» ասաց սրտակեզն
«ինչն է քեզ դեպ ինձ քաշում»:
Ասելով «վողջ լեր վարդապետ»
համբուրելով է մատնում:

Լըսվեցան բարձր աղաղակներ
«Հիսուսին մահուան մատնիր։
Պանջում յեն քահանաներն,
«Զենք ուզում Նորան խաչիր։
5. Խաչի վերա մեռավ դատված,
Մեր ստեղծող մեր Փրկիչը.
Ամեն տեղ սուգ է տարածված,
Մեկ բեվեռիցմինչ մյուսը։
Հանգարծ քարերն պատառվեցան
Յեվ ղողդոթան խիստ շարժվեց.
Վարագույրն աստծո զորությամբ
Տաճարում յեկու ճղվեց։

## 87· Гус· 431·

1. Հարյավ, Հարյավ, գերեզմանն է թափուր,
Հարյավ, Հարյավ, ինչ պատկան քաղցրալուր,
Հարյավ, հարյավ, արդ ապրում է փառքում,
Յեվ մեզ դեպի կյանք է տանում։
Նա չուներ վոչ մի հանեանք,
Բայց դատեցին մահուան,
Մեր մեղքերը շատ տաջանք
Հասցրին Աստուծու գառան.
Տես, ճակտին մահուան քրտինք.
Մեծ է Նորա սերը.
«Կատարուեցավ», ասաց Տերը։
2. Հովսեփը խաչափայտից
Վայր առավ Նրա մարմին,
Պատանեց յերգյուղալից,
Հանձնեց գերեզմանին,
Հանկարծ ծագեց արևը,



Հայտնուեցավ մի նոր հույս.
Աստուած ասաց «յեղիցե լույս»։
3. Հրեշտակն ասաց թե Տերը
Մեռելներեն հարյավ.
Յեվ լըցվեցան սուրբերը
Ուրախությամբ անբավ,
Կենդանի է մեր Տերը.
Ամենքին պատմեցեք,
Հավատացեք և որհնեցեք։
4. Մարյամ անմխիթար
Տիրոջն կարոտում է.
Հանկարծ նա բերկրապատար
Հիսուսին տեսնում է.
Նա ընկավ յերկիր պագեց
Յեվ ասաց «ռաբբունի».
Մենք յեվս Նորան տեսնենք պիտի։

---

# VIII· ՅԵՐԳԵՐ, ԶԱՆԱԶԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՐ.

## 79· Гус· 484.

1. Տեր տուր յերջանկություն,
Բազմաթիվ որեր.
Ուրախ կյանք քաղցրություն
Հեռու փորձանքներ։
2. Թող սորանց կյեանքն լինի,
Միշտ ախորժելի.
Յեվ Քո շնորհաց լույսով,
Միշտ լուսավորվի։
3. Տուր իմաստություն տեր,
Այս կարճ կյանքի մեջ.

Գտնել բարձր գանձեր
Քո սուրբ խոսքի մէջ:

4. Տէր օրհնիր Քո սիրածին,
Փոխադարձաբար.
Վոր դիմեն աղոթքով
Քեզ միշտ անդադար:

5. Ով Տէր սուրբ հույսերով
Դու սրանց հաստատիր,
Հավատքի գանձերով,
Տէր դու սրանց պահիր:

6. Թող պարզ տեսնեն սրանք վոր,
Մեզ հետ յես դու միշտ.
Յեվ ուզում յես դու վոր
Լինես ընկեր ճիշտ:

## 80. Гус. 143.

1. Սաստիկ մռնչում է կյանքի ովկյանոսը
Ահավոր ալիքներ նավիս յեն զարկվում.
Մահուան սարսափի մէջ սիրտըս նըվաղում է
Աստուած իմ Աստուած իմ, առ Քեզ յեմ դիմում:

2. Խղճալով ինձ Տէր, վողորմիր և փրկիր.
Մանկությունիցս կյանքի հետ յեմ մրցում.
Մրցելու զորություն էլ իմ մէջ յես չեմ զգում,
Աստուած իմ վողորմիր Քեզ յեմ աղաչում:

3. Հանդարտ նավահանգիստ պատվերներդ կա-
տարելու
Քայլերըս ուղիղ յեվ ինձ ազատիր.
Կյանքի ալիքներից իմ անձը փրկելով
Բարի Աստուած ինձ ափը հանիր:



## 81.

1. Այնպես անուշ անուն չկա,
Չըկա այնպես սիրունը,
Ինչպես ծնանելից առաջ
Փրկչին տրված անունը:
Փափակ ունինք Տիրոջ տեսնել
Տեսնել մեր Հօրը տունը,
Այնպես անուշ անուն չը կա,
Ինչ պես Հիսուս անունը:

2. Հրեշտակ իջավ Հիսուս ասաց,
«Դնես նորա անունը
Քանզի մահից պիտի փրկե
Բոլոր իր ժողովուրդը»:

3. Խաչի վերա էլ գրեցին
Այդ Հիսուս քաղցր անունը,
Վոր մարդիկ տեսնեն մեր Փրկչին
Յեվ ճանաչեն սերն անհուն:

4. Յեվ հիմա հօր մոտ նստած,
Նա է մեր բարեխոսը.
Ուստի սիրենք ու միշտ գովենք
Մեր տեր Հիսուս Քրիստոսը:

## 82.

1. Բարի Հիսուս քո սըրտումը
Ինչ լավ է տեղ ունենալ,
Ինձ վոչինչ այս աշխարհումը
Չէ կարող լիություն տալ.
Բայց յես այնտեղ ծածկվել կամիմ,
Հեռու խառն աղմուկներից.

Ով բարեկամս հավատարիմ,
Տուր լիանամ քո սերից։
2. Թող քո ծոցում հանգստանամ,
Այնտեղ կենամ հավիտյան.
Ա՜խ, ոգնիր, որ վազելով գամ,
Զուշանամ ոչ մի վայրկյան.
Քո սիրո մեջ ընեմ, զարթնեմ,
Դորա մեջ շարժվեմ անվախ.
Քո սիրո մեջ գընամ, կանգնեմ,
Ապրեմ հավիտյան ուրախ։
3. Քեզանից դուրս յես չեմ ապրիլ,
Հիվանդանում եմ իսկույն.
Քեզանից դուրս՝ ում մոտ գտնել
Հանգիստ և խաղաղություն.
Վո՜հ, քո սիրո հովանյաց տակ
Գտնում եմ մի ամուր բերդ,
Ուր ապահով եմ շարունակ,
Ո՜հ, ինչ տուն հըրաշակերտ։

## 83.

1. Միակ բժիշկ մեզ հայտնվեց,
Միայն նրանով ենք փրկյած
Խոցվածներին հաշտեցրեց
Մեր Հիսուս Փրկիչն խաչյած։
Լավ բաժին ես ինձ տվել,
Չեյի կարող նրան հուսալ.
Քո փառքը յես յերգում եմ,
Հիսուս դու փրկիչս իմ։
2. Նա բոլոր մեղքերը ներեց
Քեզ սիրող քո փրկիչը։



Հոր տունը քեզ համար բացեց
Յերկնքի բնակարանը։
3. Քեզ հավիտյան գովելու յեմ,
Հարություն առած Փրկիչ.
Քո անունը յես սիրում եմ,
Իմ Տեր Քրիստոս ազատիչ։
4. Մեղքն և մահը քեզնից փախչում են
Իմ զորավոր ազատիչ.
Սրտմումս ինչ քաղցր հնչվում են—
Խոսքերն. Նա յե իմ Փրկիչ։
5. Յեկեք ով յեղբայրներ յերգենք
Անունը մեր Հիսուսի.
Յեվ քույրեր յերգով բարձրացնենք
Փառավորենք Հիսուսին։
6. Յերեխաներ, մեծ թե փոքր եք
Փառաբանենք Հիսուսին.
Ձեզ կանչում է, որ դուք գործեք,
Յեվ ծառայեք Հիսուսին։
7. Յերբ որհներգություններով այնտեղ
կհայտնվենք բոլորս միասին
կը խոնարհվին մեր գլուխներ
Թագավորի առաջին։

## 84. Гус. 23

Փրկիչ հայտնեց ողորմություն
Ինձ մեղավոր արարածիս,
Ինձ ցույց տուավ յուր սերն անհուն,
Որ դժոխքից փրկե հոգիս.
Այս տեսնելով կուրախանամ,
Իմ մեծ փրկչին յես փառք կըտամ։

2. Ես բարկության արժան փորձի
Տեր Հիսուսից շընորք գտի.
Ինքն բաժանող պատը քանդեց
Տիրոջ հետ ինձ միացըրեց.
Ո՞վ կատարեց այս գըթություն.
Ողորմություն, ողորմություն։

3. Ով իմ Աստուածս, պատմեմ պիտի
Ողորմությունդ ամեն մարդկանց,
Խեղճ մեղավորք դառնան պիտի
Եվ սիրեն քեզ բոլոր սըրտանց։
Տըրտմյալք պիտի ուրախանան
Ողորմությունդ յերբ հասկանան։

4. Կարճ ժամանակն պանդխտության
Ներկայությունդ իմ հետ լինի.
Կը հուսամ միշտ քո ոգնության,
Երբ փորձություն ինձ վրա հասնի.
Կը սպասեմ յես քո հայտնության
Եվ փառք կը տամ ողորմության։

## 85.

1. Մեզի վողբի ձայնը, յերկրի ծայրերից,
Սուգի աղաղակը կու գա ազգերից
Ասում յեն եղբայրներ, շուտ մեզ մոտ յեկեք,
Խիստ շատ յեն ցավեր մեր մեզի ոգնեցեք։

2. Դուք վոր Հիսուսինն յեք մեր ձայն լսեցեք,
Ձրի դուք առած յեք, ձրի ել տվեք.
Ճամպան փրկությանը մեզ սովորեցրեք,
Մեղքի մեծ դարմանը մեզի ճանցուցեք։



3. Մեղքով պինդ կապված յենք ու ղաղապատուած.
Մահուած մեջ նստած յենք յույսերից զրկված.
Վա՜հ, մեկ մարդ ել չը կա, մեզ մխիթարող
Արած աղոթներիս չկա միտք դնող։

4. Անմահ հոգիները կրակից հանելու
Բոլոր ձեր ջանքերը, արժան ե տալը.
Արծաթ և վոսկի ել բնավ մի խնայեք,
Նա յեվ ձեր անձերը կամավ զոհեցեք։

## 86.

Ալելույա, Ալելույա, ալելույա, փառք հայր
Աստուծուն։
Ալելույա, Ալելույա, Ալելույա, փառք փրկիչ
Քրիստոսին։
Ալելույա, Ալելույա, Ալելույա, փառք պատիվ
սուրբ հոգուն։

## 87.

1. Ի՞նչն ե ինձ մեղքից սըրբում.
Միայն Հիսուս գառի արյունը.
Ի՞նչն ե ինձ լիովին փրկում
Միայն Հիսուս գառի արյունը.
Ո՜հ, թանգագին աղբյուր։
Ամեն բան մաքրում ե.
Հոգիս ել հանգչում ե
Միայն Հիսուս գառի արյունում։

2. Ի՞նչն ե պարտքից ազատում.
Միայն Հիսուս գառի արյուն.
Ի՞նչ ե Հայրն հավանում,
Միայն Հիսուս գառի արյունը։

3. Ի՞նչն Աստծո հետ հաշտեցնում.
Միայն Հիսուս դառի արյունը.
Նեղութիւնից ազատում.
Միայն Հիսուս գառի արյունը։
4. Ի՞նչն է ծուռն ուղեցնում.
Միայն Հիսուս բառի արյունը.
Աստուծո մոտ արդարացնում.
Միայն Հիսուս գառի արյունը։
5. Ի՞նչն է մեղքին հաղթողը.
Միայն Հիսուս գառի արյունը,
Աստուծու հերոս դարձնողը,
Միայն Հիսուս գառի արյունը։
6. Ի՞նչն է ամեն ցավ ջնջում.
Միայն Հիսուս գառի արյունը.
Ի՞նչն է մեզ յերկինք տանում.
Միայն Հիսուս գառի արյունը։

## 88.

1, Գերեզմանի մեջ մութ,
Հիսուս Փրկիչ եմ.
Յեկավ հարության որ,
Հիսուս Տերն իմ։
Քարն թավալեք, Նա հարյավ,
Մահի միջից Տերն դուրս յեկավ
Հիսուսն է, չպահեց նորան մութ գերեզման
Զի կենաց իշխանն հաղթեց մահի ուժին։
Նա հարյավ, մեր Հիսուս,
Ալելույա, մեր Հիսուս։
2. Թե յեվ քարն եւ կընքեք,
Հիսուս Փրկիչն իմ,



Թագավորին փագեք,
Հիսուս Տերն իմ։
3. Ով մահ, զոհդ այստեղ ուր,
Հիսուս Փրկիչն իմ,
Քեզ էս Տերն հաղթում է
Հիսուս Տերն իմ։

## 89.

1. Ով դու պանծալի, ով յերանելի
Որ զատկական ավետաբեր.
Աշխարհքն գերի եր,
Հարյավ փրկիչ մեր,
Ուրա՜խ, ուրա՜խ կացեք, յեղբայրներ։
2. Ո՛վ դու պանծալի, ով յերանելի
Որ զատկական ավետաբեր.
Մահը հաղթուած է,
Կյանքը հայտնուած է,
Ուրախ, ուրախ կացեք, ով յեղբայրներ։
3. Ո՛վ դու պանծալի, ով յերանելի
Որ զատկական ավետարեր.
Նա կամի, վոր մենք
Նրա համար ապրենք,
Ուրախ, ուրախ կացեք ով եղբայրներ։

## 90.

1. Լսեք Հիսուս կանչում է յեկեք,
Ձեռներդ պիտի բռնեմ,
Աստ նեղության մեջ եւ լինենք,
Բայց յերկինք ձեզ կտանեմ։

Մարդի որդիք, յեկեք, յես յեմ,
Դեպի հանգիս ձեզ կտանեմ,
Յերջանիկ խումբ անդ ուրախ է
Յեվ միշտ հրճվում է։

Ո՜հ ինչ քաղցր բաժին,
Ինչ բաժին, ինչ բաժին,
Ո՜հ ինչ քաղցր բաժին
Կա Հիսուսի գոգին.
Սուրբերը այնտեղ անթիվ յեն,
Գառի հարսանիք տոնում յեն,
Ուրախ յերգում Վիքտորիա,
Գառին ալելույա։

2. Տես Սիոնում ուրախանում յեն
Մեղավորի համար,
Յերանյաց խումբեր յերգում յեն
Հրեշտակք չունին դադար.
Հիսուսի արյուն յեն գովում,
Որն այնպես մեծ հրաշք է անում,
Աստուծուն ամենքն յեն գովում,
Վոր կորածն է փրկում։

3. Վերջին օրը մեր Փրկիչը
Թագցրությամբ մեզ կասե.
Յեկեք ժառանգեք այն փառքը
Հոր մոտ լուսո մեջ է.
Ամեն բերան լի ծիծաղով,
Ամբողջ յերկինք բարձր ձայնով
Պիտի ասեն. Այս մեծ բանեբ
Մեր Տերն է մեզ արել։



## 91.

1. Հայր ճամպատ ինձ սովրեցրու,
Փորձության այս ժամանակն
Յեվ ինքդ ինձ անցկացրու,
Վոր առնեմ կենաց պսակ։
Հաղթության արմավենին
Այն ժամ տուր վոր ձեռքս առնեմ
Յեվ սուրբոց ու հրեշտակաց հետ
Յես նոր յերգ յերգեմ։

2. Սիրաս Սիրով թող լեցնե
Յերկնային քաղցր աղավնին,
Զար կիրքերս դադրեցնե,
Որ հաղթեմ ամեն մեղքին։

3. Ինձ խաղաղությամբ լեցրու,
Փոթորիկը հանդարտի,
Գանգատներըս դադրեցրու,
Թող Հոգիս սիրովդ հանգչի։

4. Հրամանովդ սուրբ հրեշտակներն
Իմ շուրջս բանակ դնեն,
Յեվ վերից սիրույդ աչքերն
Մինչև վերջը վրաս հսկեն։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Биб...
7/II 1922

## ՑԱՆԿ ՆՅՈՒԹՈՑ.


I. Փառաբանություն . . . . . . . . . . 1— 6.
II. Հրավեր դեպի ապաշխարություն . . . 7—27.
III. Առաջին քայլեր . . . . . . . . . . 28—38.
IV. Քրիստոնյական պայքար . . . . . . . 39—48.
V. Քրիստոնյական մխիթարություն . . . 49—63.
VI. Հավատացյալի հայրենիքը . . . . . . 64—71.
VII. Նոր տարի, ծնունդ . . . . . . . . 72—78.
VIII. Յերգեր զանազան դեպքերի համար, . 79—91.


## ՑԱՆԿ ՅԵՐԳՈՑ.


Ալելույա . . . . . . . . . . . . . . . 86
Ահա որը վերջանում է . . . . . . . . . 14
Ահա մեզի մանուկ ծնավ . . . . . . . . . 76
Այգիից Տեր այցելու լեր . . . . . . . . 24
Այն ժամանակ, յերբ մեր Տիրոջ փողն . . . 69
Այն պես անուշ անուն չկա . . . . . . . 81
Ասա Տեր յուր արյունն հեղեղից . . . . . 10
Ասա յեղբայր դու վորտեղ յես գընում . . 12
Առաջնորդիր ով յեհովա . . . . . . . . . 49
Ավետարան ուխտի համար . . . . . . . . 40
Ավելի մոտ ով Տեր . . . . . . . . . . . 52
Արդյոք այն գետին յեզերքը . . . . . . 66
[illegible]րն[illegible] Քո սրտումը . . . . . . . . 82
[illegible]լոր յերկիրներ Տերովը ցնծացեք . . . 4
[illegible]ղմանի մեջ մութ . . . . . . . . . 88
[illegible]րիտես աղբյուր վոր բղխում է . . . . 15
Գիշերային դաշտից վերա . . . . . . . . 73
Գնամ պիտի դարդակ ձեռքով . . . . . . . 46
Դու իմ ոգնությունս յես Տեր . . . . . . 53
Թե անցնում ն իմ կյանք հանդարտ . . . . 59
Թե չստանան այստեղ լուծում . . . . . . 61
Թե փորձել յես արյան զորություն, սաա . . 60
Թող առնե ով կուզե առանց փողի . . . . . 21

Թող ուրախ լինեն սրտեր մեր . . . . . . . . . 56
Թռչունի պես արագնթաց . . . . . . . . . 63
Իբր պանդուխտ աշխարհքումս թափառեմ . . . . 67
Ինչն է ինձ մեղքից սրբում . . . . . . . . 87
Ինչպես վոր յեմ մեղքով լցված . . . . : . . . 31
Ինչպես բարեկամ է Հիսուս . . . . . . . . 57
Լսիր սիրելիս յեվ ուսիր այս խոսքը . . . . . . 62
Լսեք Հիսուս կանչում է, յեկեք, . . . . . . . 90
Լի վշտերով, տառապանքով . . . . . . . . . 77
Լուռ գիշեր, սուրբ գիշեր . . . . . . . . . 74
Կորհնենք Քեզ Աստուած . . . . . . . . . 5
Կայ մի աղբյուր վորից արյուն . . . . . . . 17
Հայր ճամպատ ինձ սովրեցրու . . . . . . . . 91
Հարյավ, հարյավ, գերեզման է թափուր . . . . 78
Հիսուս Փրկիչ դու իմ Տերը . . . . . . . . 37
Հիսուս միմիայն իմ սիրտ պիտ ունենա . . . . 58
Հնչիր զանգակ յերկնից հրեշտակ ցնծայեք . . . 18

## Մ.

Մի անցնիր ինձնից Փրկիչս . . . . . . . . . 36
Միակ բժիշկ մեզ հայտնուեցավ . . . . . . . .
Մեզի վողբի ձայնը . . . . . . . . . . . . 85
Մի դուռ գիտեմ շատ լայն բացուած . . . . . .
Մի մերժիր դու Քեզնից հոգին . . . . . . . . 19
Մի նայվածք խաչյալին բավ է կյանք տալու . . 16
Մենք կանգնած յենք գետի ափին . . . . . . . 64
Մի յերկիր կա արտեղ ցնծում . . . . . . . . 71

## Յ.

Յեկ Փրկչի մոտ, յեկ դու հենց հիմա . . . . . . 7
Յեկեք մեղավորներ յեկեք . . . . . . . . . . 25



Յեկեք մեր ճամպան նորոգենք . . . . . . . . . 72
Յես հոգնած յեվ բեռնավորված . . . . . . . . 29
Յես լսում յեմ ձայնդ ով Հիսուս . . . . . . . 34
Յես հավիտյան հանգիստ կլինեմ . . . . . . . 35
Յես չեմ ամանչում քարոզել . . . . . . . . . 39
Յեղբայր լսիր դու բարի լուր . . . . . . . . . 22
Յեղբայր ոն տուր ի գործ մեր Տիրոջ ծառայենք . 42
Յերկրպագեմ սիրո զորությանն . . . . . . . . 6
Յելնենք Գողգոթա իմ եղբայր . . . . . . . . 13
Յերբ սիրտս բաղել եր . . . . . . . . . . . 38
Յերանելի այն որն է Տեր . . . . . . . . . . 51

## Ն.

Ներիր իմ մեղքերս աններելի . . . . . . . . . 28

## Ո.

Ով դու բերկրալի . . . . . . . . . . . . . 75
Ով դու պանծալի . . . . . . . . . . . . . 89
Բարի յեղբայր դու ինձ միշտ պատմիր . . . . . 11
Ով Հիսուս դու յերբ պիտի գաս . . . . . . . . 51
Գեր' ր պիտի ապրես հավիտյան . . . . . . . . 26
Ո՞ւր է Հիսուս իմ փափակը . . . . . . . . . 33
Ուղարկիր Տեր պատմել Նրանց . . . . . . . . 47
Պատմում յենք մի յերկրից փառավոր . . . . . . 68
Սաստիկ խփում է փոթորիկը . . . . . . . . . 27
Սաստիկ մռնչում է կյանքի ովկիանոսը . . . . . 80
Սուրբ հոգի առաջնորդիր . . . . . . . . . . 50
Սուրբ յես, սուրբ յես, սուրբ յես Տեր . . . . . 3

## Վ.


Վառ փայլում է Աստծու սէրը . . . . . . . . . [illegible]
Վեր կաց կը գա գիշերը . . . . . . . . . [illegible]
Վեր կաց ով քնած . . . . . . . . . . [illegible]
Վո՜հ որ անճառ . . . . . . . . . . [illegible]
Տէր Աստուած սէր է . . . . . . . . . . [illegible]
Տէր Այցելութեամբ յերկիրը . . . . . . . . 32
Տէր Յիսուս անցնում է ջուր ու ցամաքով . . . [illegible]
Տէր ձայնդ կը լսեմ . . . . . . . . . . [illegible]
Տէր տուր յերջանկութիւն . . . . . . . . [illegible]
Տես տանջվող սիրտ Քրիստոսին . . . . . . . [illegible]
Փառք և պատիվ ու զորութիւն ա. . . . . . . 1
Փառք և պատիվ ու զորութիւն բ. . . . . . . 2
Փայլուն պողպատից չէ մեր սուրն . . . . . . 48
Փայլում է մի յերկիր յեռուից . . . . . . . [illegible]
Փրկիչ հայտնեց վողորմութիւն . . . . . . . 84
Քաջ յեղեք ով յեղբայրներս . . . . . . . . [illegible]
Քրիստոսի մոտ յեկեք շուտով . . . . . . . . 23


ՀՀ Ազգային գրադարան
NL0156940